Հավելված **N 11**

## Մ Ե Կ Ն Ա Բ Ա Ն ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ 2012 թ. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ

## ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

### *1. Ապարատի պահպանման ծախսեր*

### *Աշխատավարձ և նրան հավասարեցված միջոցներ՝ 4,329,285 հազ. ՀՀ դրամ*

Աշխատավարձի և նրան հավասարեցված միջոցների հաշվարկը կատարվում է ելնելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 14-րդ կետի «զ» ենթակետի պահանջներից, համաձայն որի ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների աշխատավարձի միջինը պետք է համապատասխանի ՀՀ բանկային համակարգի միջին աշխատավարձին: Այն պարագայում, որ բանկերը 2012 թվականի համար կանխատեսում են 548 հազ ՀՀ դրամ միջին աշխատավարձ, ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների միջին աշխատավարձը 2012 թվականի համար պլանավորվել է 451.5 հազ. ՀՀ դրամ: Այն 2011 թվականի միջին աշխատավարձից ավել է 3 %ով, որը պայմանավորված է կենտրոնական բանկում գործող վարձատրության կանոնների համաձայն նախատեսված աշխատավարձի բնականոն 3 % աճով: Նախորդ տարվա 750 մարդ աշխատակցի փոխարեն 2012 թվականի համար պլանավորվել է 800 մարդ: Աշխատակիցների քանակի ավելացումը կապված է Դիլիջանում կառուցվող «Ուսումնահետազոտական կենտրոն» և «Գիտելիք հանուն զարգացման» համալիրների բացման հետ: Նշված հաստատություններում նախատեսվում է բացել 50 նոր հաստիք, այդ թվում կառույցների ղեկավարներ, ղեկավարների տեղակալներ, 15 հետազոտողի աշխատատեղ, սպասարկող անձնակազմ: Նախատեսվում է, որ ուսումնահետազոտական կենտրոնում պետք է աշխատեն մասնագիտական բարձր որակավորում՝ PhD և այլ գիտական աստիճաններ, ունեցող հետազոտողներ:

Աշխատակիցների քանակի ավելացման և աշխատավարձի 3 տոկոս բնականոն աճի արդյունքում «Աշխատավարձ և նրան հավասարեցված միջոցներ» ծախսային հոդվածը 2011 թվականի համեմատությամբ կավելանա 9.7 տոկոսով:

### *Պարտադիր սոցիալական ապահովության վճարների և սոցիալական ապահովության այլ ծախսեր՝ 757,000.0 հազ. ՀՀ դրամ*

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների և սոցիալական ապահովության այլ ծախսերի հաշվարկը կատարվել է 2012թ.-ի համար կանխատեսվող ՀՀ ԿԲ հաստիքացուցակի համար: Նախատեսված գումարից՝ **390,000.0 հազ. դրամը** նախատեսվում է պարտադիր սոցիալական ապահովության վճարներ կատարելու, իսկ **367,00.0 հազ. դրամը**՝ ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների առողջության ապահովման և այլ սոցիալական ծախսերը հոգալու համար:

### *Անձնակազմի գործուղում՝ 432,843.9 հազ. ՀՀ դրամ*

Առաջնորդվելով ՀՀ կենտրոնական բանկի 2012-2014թթ. ռազմավարությամբ սահմանված խնդիրների իրականացման անհրաժեշտությամբ՝ կենտրոնական բանկը կարևորում է անձնակազմի ուսուցումն և վերապատրաստումը, որի նպատակով ապահովում է իր աշխատակիցների մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ արտասահմանում, ինչպես նաև կազմակերպում է ուսուցողական և փորձի փոխանակման այցեր:

Համաձայն կենտրոնական բանկի կողմից որդեգրված ուսուցման և վերապատրաստման քաղաքականության, կենտրոնական բանկը մեծ ուշադրություն է դարձնում վերապատրաստման այնպիսի դասընթացներին մասնակցությանը, որոնք նպաստում են բանկի առջև դրված տարաբնույթ խնդիրների և նախագծերի արդյունավետ իրականացմանը: Հաշվի առնելով այն, որ Հայաստանի Հանրապետությունը ներկայումս գտնվում է այնպիսի բարեփոխումների փուլում, որոնք ենթադրում են ֆինանսական շուկայում նոր մարտահրավերներ, մասնավորապես՝ նոր ենթակառուցվածքների, ֆինանսական գործիքների ձևավորում և զարգացում, ԿԲ աշխատակիցները կմասնակցեն նպատակային դասընթացների, որոնք կազմակերպվում են տարբեր ֆինանսական կազմակերպությունների կողմից և ենթադրում են որոշակի մասնակցության վճար:

Այսպիսով, 2012թ.-ին նախատեսվում է կազմակերպել թվով 180 վերապատրաստման ծրագիր (այդ թվում՝ ուսուցողական այցեր, ստանդարտ և նպատակային դասընթացներ), որոնց կմասնակցի մոտ 260 աշխատակից: Վերապատրաստման դասընթացները և փորձի փոխանակման նպատակով կազմակերպվելիք ուսուցողական այցերն ուղղված են լինելու հետևյալ ոլորտներում ԿԲ աշխատակիցների մասնագիտական գիտելիքների խորացմանը և հմտությունների զարգացմանը. գործընթացների անընդհատություն, ներդրումային ֆոնդերի կառավարում, սպառողների շահերի պաշտպանություն, ֆինանսական կայունություն, ճգնաժամային կառավարման քաղաքականություն, հասարակայնության հետ կապեր, տեղեկատվական

վտանգների կառավարում, ապահովագրություն, միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտներ և այլն:

Արդյունքում կենտրոնական բանկն ակնկալում է անընդհատության ծրագրերի կազմման և դրանց ներդրման, ներդրումային ֆոնդերի վերաբերյալ օրենքի և ենթաօրենսդրական դաշտի լրամշակման, շուկայի վարվելակերպի վերահսկողության ձեռնարկի մշակման, ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունների պարտականությունների, բիզնես կանոնների հստակ սահմանման, հասարակության կողմից կենտրոնական բանկի դերի ճիշտ ընկալման, կենտրոնական բանկում վտանգների կառավարման համակարգի կանոնակարգման, միջազգային ստանդարտներին տեղեկատվական անվտանգության կանոնների համապատասխանեցման, միջազգային ֆինանսական հաշվետվությունների ստանդարտների ներդրման ուղղությամբ աշխատանքների իրականացում:
Բացի այդ, կենտրոնական բանկն անդամակցելով որոշակի միջազգային կառույցների (Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ կոմիտե, ֆինանսական հետախուզության մարմինների Էգմոնտ խումբ, ԱՄՀ, ՀԲ,) և լինելով ԱՊՀ-ի և ԵԱՏՀ-ի անդամ պետությունների արժութային, ապահովագրության և արժեթղթերի շուկայի կարգավորման պետական մարմինների խորհրդի անդամ, ուղղակի պարտավորություններ ունի ներկայացուցչություն ապահովել վերոնշյալ կազմակերպությունների կողմից կազմակերպվելիք համաժողովներին, տարեկան հանդիպումներին:

Անդրադառնալով գործուղման ծախսերի հաշվարկի մեթոդաբանությանը՝ հարկ է նշել, որ գործուղման ծախսերն իրականացվում են համաձայն ՀՀ ԿԲ-ում գործող կարգի և գործուղման նորմերի: Ինչպես և նախորդ տարի, 2012թ. ևս այս հոդվածում նախատեսված միջոցների պլանավորման հաշվարկի հիմքում ընկած է հետևյալ տրամաբանությունը. Վերապատրաստման դասընթացների միջին տևողությունը 5 օր է, որի դեպքում աշխատակիցը, գործող կարգի շրջանակներում, մեկնում է դասընթացը սկսելուց մեկ օր առաջ և վերադառնում է դասընթացի ավարտին հաջորդող օրը՝ ստանալով համապատասխան օրերի կացության վճարը և ճանապարհածախսը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ ՀՀ կենտրոնական բանկի ծախսերի նախահաշվում արտաքին վերապատրաստումների համար պլանավորվել է **362,140,428 դրամ**:

Ինչ վերաբերում է ՀՀ տարածքում ուսուցման և վերապատրաստման ծախսերին, ապա 2012թ. պլանավորվել է **69,703.4 հազ. դրամ**, նախորդ տարվա 63,830.9 հազ. դրամի դիմաց: Այս ենթահոդվածով ծախսերի ավելացումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

1. Կենտրոնական բանկում շարունակում է գործել հաշվապահական հաշվառման և աուդիտի ոլորտում աշխատակիցների միջազգային մասնագիտական որակավորման հավաստագրերի ստացման և գիտելիքի շարունակական փոխանցման պահանջը, որը ենթադրում է աշխատակիցների կողմից

համապատասխան քննությունների հանձնում, իսկ որակավորում ունեցող աշխատակիցների դեպքում՝ դրանք պահպանելու նպատակով մասնակցություն որոշակի վերապատրաստման դասընթացների:

Հարկ է նշել, որ միջազգային որակավորում ստանալու համար քննություններ հանձնող աշխատակիցների քանակն ունի աճի միտում, մասնավորապես, եթե 2009թ. քննությունները դրական արդյունքով հանձնել է 16 աշխատակից, 2010թ.-ին՝ 35 աշխատակից, ապա 2011թ. հուլիս ամսվա դրությամբ նրանց քանակն աճել է՝ հասնելով 46-ի: Հետևաբար, 2012թ. բյուջեն պլանավորելիս հաշվի է առնվել, որ մասնագիտական ոլորտներում միջազգային հավաստագրեր ստանալու գործընթացին կմասնակցի թվով 55 աշխատակից (ընդ որում, նախատեսվում է,որ նրանցից մի մասը հանձնելու է քննություններ մի քանի փուլով):

Ելնելով վերոգրյալից՝ « Վերապատրաստումներ ՀՀ տարածքում» ենթահոդվածում նախատեսված աճի մի մասը պայմանավորված է ԿԲ աշխատակիցների կողմից միջազգային որակավորման քննությունների հանձնման գործընթացով, որոնք իրենց մեջ ներառում են հետևյալ վճարները. քննություններին գրանցվելու և դրանք հանձնելու վճարներ, դասընթացներին մասնակցելու վճարներ, որոշ դեպքերում նաև՝ անդամակցության տարեկան վճարներ:

2 Պլանավորված ծախսերի մյուս մասը պայմանավորված է Սյունիքի, Վանաձորի ՏԴԿ-ներ, ինչպես նաև Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոն, տեխնոլոգիական և տեխնիկական զինման նպատակով ԿԲ աշխատակիցների գործուղումների քանակի որոշակի աճով:

3 Ի վերջո, կարևորելով երիտասարդ մասնագետների զարգացումը, ինչպես նաև աշխատանքային խնդիրներն արդյունավետ իրականացնելու համար պահանջվող հմտությունների, գործարար որակների կատարելագործման անհրաժեշտությունը՝ կենտրոնական բանկը որոշակի միջոցներ է պլանավորել նաև այս նպատակով ՀՀ տարածքում առկա ուսումնական հաստատություններում և տեղի մասնագետների ներգրավմամբ ուսուցման և վերապատրաստման ծրագրերին ԿԲ աշխատակիցների մասնակցությունն ապահովելու նկատառումով:

Հարկ է նշել նաև, որ 2011թ.-ից սկսած կենտրոնական բանկն իրականացրել է աշխատակիցների անգլերեն լեզվի իմացության գնահատում, օտարերկրյա կազմակերպություններում ԿԲ աշխատակիցների կողմից վերապատրաստման ծրագրերին մասնակցության արդյունավետությունը բարձրացնելու և բարձրորակ ներկայացուցչություն ապահովելու նպատակով: ԿԲ աշխատակիցների օտար լեզուների իմացության մակարդակի գնահատումը շարունակելու համար այս հոդվածում նախատեսվել է **1,000.0 հազ. դրամ,** համապատասխան թեստեր մշակելու և դրանք կիրառելու նպատակով:

## *Ներկայացուցչական ծախսեր՝  54,187.0  հազ. ՀՀ  դրամ*

2012 թ.-ին նախատեսվում են մի շարք միջազգային պատվիրակությունների ընդունելություններ՝ ինչպես միջազգային բանկային և ֆինանսական կազմակերպություններից, այնպես էլ ազգային/կենտրոնական և առևտրային բանկերից: Այդ պատվիրակությունների ընդունելության հետ կապված ծախսերի թվում ներառվում են կեցության հետ կապված ծախսերը և այլն: 2012թ.-ի ընթացքում նախատեսվում է նաև Երևանում անցկացնել մի շարք միջազգային ձևաչափի սեմինար-դասընթացներ, որոնք կազմակերպվելու են ՀՀ կենտրոնական բանկի, Նիդեռլանդների, Գերմանիայի, Չեխիայի, Լեհաստանի և Ֆրանսիայի ազգային/կենտրոնական բանկերի հետ համատեղ:

## *Ծառայողական փոխադրամիջոցների շահագործում՝ 84,442.0 հազ. ՀՀ դրամ*

ՀՀ ԿԲ-ում շահագործվում է 27 ավտոմեքենա: Ծառայողական փոխադրամիջոցների շահագործման ծախսերի հաշվարկները կատարվել են հիմք ընդունելով 2011թ. ՀՀ ԿԲ կողմից վառելիքի ձեռք բերման և ավտոմեքենաների տեխսպասարկման պայմանագրերը: Նախորդ տարվա նկատմամբ՝ գումարը աճել է 10 %-ով, ինչը պայմանավորված է հիմնականում շուկայում գործող գների բարձրացման հետ, ինչպես նաև Դիլիջանի «Ուսումնահետազոտական կենտրոնի» և «Գիտելիք հանուն զարգացման» համալիրի ՏԴԿ տեղային գործուղումների քանակի ավելացման հետ:

- **Ծառայողական փոխադրամիջոցների սպասարկում.**

  Հաշվի առնելով 2010թ և 2011թ I կիսամյակում ավտոմեքենաների սպասարկման վրա կատարված ծախսերը, 2012թ ծառայողական փոխադրամիջոցների սպասարկման համար նախատեսվող գումարը սահմանվել է ամսեկան ***77,000*** ՀՀ դրամ, որը տարեկան կկազմի մոտ՝ ***24,948,000*** ՀՀ դրամ:

  27 ավտոմեքենա x 77,000 x 12 ամիս =24,948,000 ՀՀ դրամ

- **Վառելանյութ.**

Հիմք ընդունելով այժմյան գները և  շուկայում կատարվելիք գների տատանումները, 2012թ վառելանյութի՝  բենզինի 1 լիտրի համար կանխատեսվող գինը սահմանվում է **500.0**  ՀՀ դրամ՝  նախորդ տարվա գնի՝ ***450.0***  ՀՀ դրամի համեմատ, իսկ դիզ վառելիքի 1 լիտրի  գինը՝ 450.0 ՀՀ դրամ՝ նախորդ տարվա գնի՝ ***410.0*** ՀՀ դրամի փոխարեն:

ՀՀ կենտրոնական բանկի ներքին կարգերին համաձայն ՀՀ կենտրոնական բանկում տարեկան ծախսվում է մոտ 88,600լ բենզին, որը 500 դրամով հաշվելու դեպքում կենտրոնական բանկի բենզինի տարեկան ծախսը կկազմի ***44,300,000 ՀՀ դրամ:***

*Դիզելային վառելիքի* ՀՀ կենտրոնական բանկի ներքին կարգերին համաձայն տարեկան ծախսվում է մոտ 25,240լ դիզ. վառելիք, որը 450 դրամով հաշվելու դեպքում կենտրոնական բանկի դիզ. վառելիքի տարեկան ծախսը կկազմի՝ ***11,358,000 ՀՀ դրամ***:

Քսայուղեր ձեռք բերելու համար 2012թ. նախատեսվում է ***1,836,000*** **ՀՀ դրամ:** Բանկի 27 ավտոմեքենաների շարժիչների համար անհրաժեշտ է կիսասինթետիկ 10x40 ստանդարտներին համապատասխան բարձրորակ յուղ, որոնց շուկայական արժեքը 5լ համար կազմում է 17.000 ՀՀ դրամ: Նախատեսվում է յուրաքանչյուր ավտոմեքենային տարեկան 4 անգամ յուղի փոխում: Մեկ անգամվա յուղի փոխման արժեքն է ***17.000 ՀՀ դրամ***:

*27հատ x 4անգամ x 17.000դրամ* =***1,836,000 ՀՀ դրամ:***

- **Այլ տրանսպորտային ծախսերի *2,000,000 ՀՀ դրամ***

Այս գումարը նախատեսվում է տեխ. զննման, ՊետԱվտոՏեսչության և այլ հնարավոր ծախսերի իրականացման նպատակով:

## *2. Լրատվական տեղեկատվության և մասնագիտական գրականության ձեռքբերման ծախսեր՝ 64,872.4 հազ. ՀՀ դրամ*

Հաշվի առնելով հայտարարությունների ծավալի և հաճախականության աճի հնարավորությունը տեղական մամուլում, հայտարարությունների հրապարակման համար պլանավորվել է 7,000.0 հազ դրամ, որտեղ ներառված են նաև Banks.am և Career Center.am ինտերնետային կայքերում հայտարարությունների տեղադրման ծախսերը (համապատասխանաբար 84000 դրամ մեկ տարվա համար անսահմանափակ քանակությամբ հայտարարությունների տեղադրման համար և 358.000 դրամ (գումարը նախատեսված է տարեկան 20 հատ հայտարարությունների համար)): ԿԲ հաշվեկշիռները, արտաքին պահուստների մասին տեղեկատվությունը, անպարտաճանաչ վարկառուների ցանկը, թափուր աշխատատեղերի և ձեռքբերման մրցույթների մասին հայտարարությունները տպագրվելու են «Ազգ», «Հայաստանի Հանրապետություն», «Հայոց Աշխարհ», «Առավոտ», «Գոլոս Արմենիի», «Կապիտալ» թերթերում:

ՀՀ Կենտրոնական բանկի և Հայաստանի բանկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության ***արտասահմանյան հրապարակություններում*** տեղադրելու նպատակով նախատեսվում է **500.0 հազ ՀՀ դրամ:**

***Գրականության ձեռքբերման*** համար պլանավորվել է **10,372.4 հազ ՀՀ դրամ**

***Ամսագրերի և թերթերի բաժանորդագրության*** համար պլանավորվել է **12,000.0 հազ ՀՀ դրամ:** Գումարը նախատեսվում է Հայաստանի Հանրապետության տնտեսական, ներքաղաքական, ինչպես նաև միջազգային նորություններին իրազեկ լինելու նպատակով անհրաժեշտ Հայաստանում լույս տեսնող տնտեսական և տարբեր քաղաքական ուղղվածություն ունեցող մի շարք թերթերի, ինչպես նաև ֆինանսաբանկային տեղեկատվություն պարունակող ռուսական և արտասահմանյան թերթերի և ամսագրերի բաժանորդագրության համար: 2012 թ-ին շարունակվելու են մի շարք արտասահմանյան մասնագիտական ամսագրերի բաժանորդագրությունները, ինչպես նաև բաժանորդագրվելու ենք մի քանի նոր ամսագրերի:

***Լրատվական գործակալությունների նյութերի ձեռք բերման*** համար պլանավորվել է 6,500.0 հազ ՀՀ դրամ: Ծախսերը պլանավորվել են հաշվի առնելով լրատվական գործակալությունների ծառայությունների գների 10-20 տոկոսանոց հավանական թանկացման հնարավորությունը:

***Ֆիլմի և տեսահոլովակի նկարահանման*** համար պլանավորվել է **20,000.0 հազ դրամ:** ԿԲ շարունակելու է տարբեր բացատրական և գովազդային տեսահոլովակների նկարահանումը և ռադիոգովազդների հեռարձակումը, որի համար նախատեսված ծախսերը կկազմեն 20 մլն դրամ՝ որից 6 մլն դրամ նախատեսվում է ռադիոգովազդների և հեռուստագովազդների պատրաստման, և 14 մլն դրամ՝ ռադիոգովազդների և հեռուստագովազդների հեռարձակման համար: Նախատեսվում են բացատրական տեսա- և աուդիոնյութերի պատրաստում ֆինանսական ծառայությունների սպառողների շահերի պաշտպանության, անկանխիկ վճարումների զարգացման խթանման, կենսաթոշակային բարեփոխումների և այլ թեմաներով: Ծախսերի էական մաս են կազմում հատկապես հոլովակների հեռարձակման ծախսերը:

1. Մեկ 30 վայրկյանանոց ռադիոգովազդի պատրաստման ծախսը միջինում կազմում է 25,000 դրամ, իսկ 1 ամիս տևողությամբ հեռարձակումը 1 ռադիոկայանով՝ 450,000 դրամ:
2012 թ-ին նախատեսում ենք պատրաստել մի քանի ռադիոգովազդ և դրանք տարբեր ժամանակահատվածներով հեռարձակել 3-4 ռադիոկայաններով:
4 ռադիոգովազդի պատրաստում – 4x25,000 – 100,000 դրամ
Ռադիոգովազդների հեռարձակում 1 ամսով – 4x450,000 – 1,800,000 դրամ

2. Մեկ 2 րոպե տևողությամբ տեսահոլովակի նկարահանման ծախսը կազմում է 3 մլն դրամ:

2012 թ-ին նախատեսում ենք պատրաստել 2 տեսահոլովակներ: 2 տեսահոլովակների նկարահանում – 2x3,000,000 – 6,000,000 դրամ:

Դրանք հեռարձակվելու են 4-5 հեռուստաընկերություններով: Գովազդային արշավները նախատեսվում են իրականացնել տարեկան երկու անգամ 2 ամսով՝ գարնանը և աշնանը:

2010թ. գարնանային հեռարձակման գինը կազմել է 7,758,000 դրամ. ըստ այդմ, հեռարձակման ծախսերը կկազմեն 15,516,000 դրամ:

«Պրայմ թայմ» համարվող ժամերին հեռարձակման ծախսերը կազմում են.

Հ1 - 1 րոպեն՝ 125,500 դրամ
Երկիր Մեդիա - 1 րոպեն՝ 25,000 դրամ
Շանթ - 1 րոպեն՝ 160,000 դրամ
Արմնյուզ - 1 րոպեն՝ 8,000 դրամ

***Հասարակայնության հետ կապերի գծով*** ծախսերը պլանավորվել են 6**,500.0 հազ ՀՀ դրամ**: Պլանավորման նպատակը* ԿԲ գործառույթները ներկայացնող ցուցահանդեսների կազմակերպում, Հայաստանի և Արցախի բարձրագույն կրթական հաստատությունների տնտեսագիտական ֆակուլտետների ուսանողների՝ Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակների տրամադրում: 2012 թ-ին նախատեսվում է կրթաթոշակներ սահմանել լավագույն 8 ուսանողների համար՝ 6 ամսվա ընթացքում յուրաքանչյուրին կտրվեն ամսական 50,000-ական դրամ: Ծախսերը կկազմեն 2,4 մլն դրամ:

Նախատեսում է կրթական տիպի, ֆինանսական ծառայություններ սպառողների շահերի պաշտպանության վերաբերյալ և այլ միջոցառումներ, որոնց ընթացքում հնարավոր է, որ կազմակերպվեն համապատասխան ցուցահանդեսներ, թեմատիկ դասախոսություններ: Նախատեսվում է 4,1 մլն դրամ, որը ներառում է՝

1. ցուցավահանակների պատրաստում, ձևավորում և ներկայացում, ցուցահանդեսի տարածքի վարձակալություն և պահպանություն՝ 1 մլն դրամ,

2. ԿԲ 6-8 աշխատակիցների գործուղում մարզեր՝ 1,9 մլն դրամ,

3. հյուրասիրության ծախսեր՝ 600 հազ. դրամ:

Մարզերից ԿԲ դպրոցականների այցելությունների համար կծախսվի 600 հազար դրամ:

***Ուսուցիչների վերապատրաստման*** համար նախատեսվել է **2,000.0 հազ ՀՀ դրամ**: 2012թ. նախատեսվում է շարունակել տնտեսագիտական թեքումով դպրոցների ուսուցիչների համար կրթական ծրագիրը: Տարեկան երեք անգամ առնվազն երկշաբաթյա դասընթացներ կկազմակերպվեն հանրակրթական ավագ և միջին դպրոցների ուսուցիչների համար:

### 3. Տնտեսական նյութերի և արագամաշ առարկաների դուրսգրման հետ կապված ծախսեր՝ 102,418.9 հազ. ՀՀ դրամ

2012թ.-ին կենտրոնական բանկի ծառայողների աշխատանքի նորմալ պայմաններ ապահովելու նպատակով արագամաշ առարկաների՝ պաշարների դուրսգրման հետ կապված ծախսերը կկազմեն 102,418.9 հազ. դրամ: Տնտեսական ծախսերը հիմնականում ներառում են կենտրոնական բանկի շենքի մաքրության և սպասարկման հետ կապված անհրաժեշտ ծախսերը: Պլանավորումը կատարվել է հիմք ընդունելով 2010 թվականի, 2011թ. առաջին 5 ամսվա ընթացքում օգտագործված տնտեսական նյութերի քանակներն ու 2012 թվականին դրանց սպասվելիք գները: Գումարի ավելացումը պայմանավորված է Դիլիջանի «Ուսումնահետազոտական կենտրոն» և «Գիտելիք հանուն զարգացման» համալիրների շահագործմամբ պայմանավորված տնտեսական ապրանքների և նյութերի սպառման ծավալների ավելացմամբ, ինչպես նաև 2012 թ-ին նախատեսվող նոր աշխատատեղերի բացման հետևանքով գրենական պիտույքների սպառման ավելացմամբ:

### 4. Ծառայողական նպատակներով օգտագործվող կապի միջոցների հետ կապված ծախսեր՝ 62,408.3 հազ. ՀՀ դրամ

Կենտրոնական բանկի հեռախոսային և ֆաքսիմիլային կապի անխափան աշխատանքն իրականացնում են «Արմենթել» ՀԶՓԲԸ (Երևանի քաղաքային հեռախոսակապի ծառայություն, բջջային հեռախոսակապի ծառայություն (Բիլայն և Վիվասել՝ Ղ. Տելեկոմ ՓԲԸ), Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու և Սյունիքի մարզերի տարածքային հեռախոսային կապի ծառայություն), որոնց հետ կնքված են համապատասխան պայմանագրեր և մատուցվող ծառայությունները որոշվում են ըստ սահմանված գնացուցակների: Հաշվարկներում ներառվել են աբոնենտային վարձը, խոսակցությունների վճարները, նոր հեռախոսահամարների միացումը, սակագների բարձրացման միտումը, ռոպեավարձի կիրառումը:

- Քաղաքային հեռախոսակապ 46,264,300 ՀՀ դրամ

(5.280.000+23,232,000 +11.238.656+240.000 +6.273.600)

Կենտրոնական բանկում առկա է 88 քաղաքային հեռախոսագիծ

ա) Բաժանորդային վճար՝ 5,280,000 ՀՀ դրամ

88 հ/գիծ. x 5.000 դր. x 12 ամիս = 5,280,000 ՀՀ դրամ

բ) Միջքաղաքային խոսակցությունների վճար՝ 23,232,000 ՀՀ դրամ

2011թ. արդյունքներից ելնելով, ամիսը 25, 934 դր. 1 հեռ. միջին վճարը

88 հեռ.x 22,000 դր. x 12 ամիս ~23,232,000 ՀՀ դրամ

գ) Ներքաղաքային խոսակցություններ՝ 11,238,656 ՀՀ դրամ

Հաշվի առնելով րոպեավճարի կիրառումը՝
օրական միջինը 1 հեռ.՝ 104 րոպե

88 հեռ. x 4 դր x 104 րոպե x 307օր = 11,238,656 ՀՀ դրամ

դ) Ուղիղ կապ՝ 240,000 ՀՀ դրամ

Կենտրոնական բանկում ուղիղ կապով շահագործվում է 5 հեռախոսակապ

5հեռ. X4.000 դրամ x 12 ամիս = 240,000 ՀՀ դրամ:

ե) E1 հոսք՝ 6,273,600 ՀՀ դրամ

522.800դրx12 ամիս = 6,273,600 ՀՀ դրամ

- «Վան» հանգստյան տուն՝ 360,000 ՀՀ դրամ

ա) աբոնենտային վճար

2 հեռ. x 5.000 դրամ x 12ամիս = 120,000 ՀՀ դրամ
բ) միջքաղաքային խոսակցությունների վճար

1 հեռ. x 20.000 դրամ x12 ամիս = 240,000 ՀՀ դրամ

ՀՀ կառավարությանը առընթեր ԱԱ ծառայություն ROSSA 800,000 ՀՀ դրամ

2012 թ. կենտրոնական բանկում գործելու է 2 կառավարական հեռախոսակապ՝

2 x 33.333դր. x 12 ամիս ~ 800,000 ՀՀ դրամ

- Բջջային հեռախոսակապ 6,174,000 ՀՀ դրամ

1 x 80.000 դր. x 12 ամիս = 960,000 ՀՀ դրամ
1 x 40.000 դր. x 12 ամիս = 480,000 ՀՀ դրամ
1 x 20.000 դր. x 12 ամիս = 240,000 ՀՀ դրամ
4 x 20.000 դր. x 12 ամիս = 960,000 ՀՀ դրամ
BlackBerry հեռախոսակապի սպասարկման վճար 3,534,000 ՀՀ դրամ

- Գորիս՝ 396.000 ՀՀ դրամ

1 հեռ. x 10.000 դրամ(միջքաղաքային և խոսելավարձ)_ x 12 ամիս = 120,000 ՀՀ դրամ

3 հեռ. x 5.000 դրամ (բաժանորդային վարձ) x 12 ամիս = 180,000 ՀՀ դրամ

2 հեռ. x 4.000 դրամ (ուղիղ գծի բաժանորդային վարձ) x 12 ամիս = 96,000 ՀՀ դրամ

- Վանաձոր՝ 636,000 ՀՀ դրամ

«Վանաձորի» ՏԴԿ տարածքի ընդլանման պատճառով նպատակահարմար է նախատեսել 5 քաղաքային հեռախոսագիծ և 2 ուղիղ գիծ:

1 հեռ. x 20.000 խոսելավարձ x 12 ամիս = 240,000 ՀՀ դրամ

5հեռ. x 5.000 բաժանորդային վարձ x 12 ամիս = 300,000 ՀՀ դրամ

2հեռ. x4.000 ուղիղ կապ x 12 ամիս = 96,000 ՀՀ դրամ

- Տարածաշրջանային բաժանմունք՝ 3,070,000 ՀՀ դրամ

ա) բաժանորդային վճար 10 x 5.000 բաժանորդային վարձ x 12 = 600.000 ՀՀ դրամ

բ) միջքաղաքային 10 x10.000 x 12= 1,200.000 ՀՀ դրամ

գ) 2 քաղաքային գիծ 28 ԱՀԿ 2 x 635.000=1,270.000 ՀՀ դրամ

- Սյունիքի ՏԴԿ՝ 1,008.000 ՀՀ դրամ

ա) բաժանորդային վճար 6 x 5.000 բաժանորդային վարձ x 12 ամիս = 360,000 ՀՀ դրամ

բ) միջքաղաքային 6 x 9000 դր x 12 ամիս = 648,000 ՀՀ դրամ

***Չնախատեսված ծախսերը*** պլանավորվել են **3,700.0հազ ՀՀ դրամ**

## *5. Չնախատեսված ծախսեր՝ 20,000.0 հազ. ՀՀ դրամ*

«ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ վարչական ծախսերում ներառված է «Չնախատեսված ծախսեր (ծախսերի պահուստ)» հոդվածը: Այս ծախսային հոդվածը նախատեսված է ՀՀ օրենքների և գործող տարբեր բնույթի սակագների փոփոխությամբ առաջացած գերածախսերի փակման համար, ինչպես նաև այլ չնախատեսված վարչական ծախսերի կատարման համար:

## *Ընդամենը վարչական ծախսեր՝ 5,907,457.5 հազ. ՀՀ դրամ*

# ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԾՐԱԳԻՐ

## 1. *Աշխատանքային շենքերի և շինությունների կառուցում, ձեռքբերում և կապիտալ վերանորոգում՝ 25,495,000.0 հազ. ՀՀ դրամ*

2012 թ-ին շարունակվելու են Դիլիջանում ուսումնահետազոտական կենտրոնի կառուցման աշխատանքները, ինչպես նաև Դիլիջանի գրադարանի վերակառուցման աշխատանքները՝ «Գիտելիք հանուն զարգացման» համալիրի ստեղծման նպատակով: Նշված աշխատանքների համար պլանավորվել է ***25,380,000.0 հազ* դրամ**:

Մասնավորապես, Կենտրոնի վարչական շենքի կառուցման աշխատանքների համար նախատեսվում է ***10,330,000.0 հազ ՀՀ դրամ,***

Դիլիջանում կենտրոնական բանկի աշխատակիցների ժամանակավոր կացության համար նախատեսված բնակելի շենքի համար՝ ***3,200,000.0 հազ ՀՀ դրամ***: Բնակելի շենքի տարածքում նախատեսվում է նաև մանկապարտեզի կառուցում ԿԲ աշխատակիցների երեխաների համար:

Նախատեսվում է նաև կացարանների կառուցում ԿԲ աշխատակիցների համար ***11,700,000.0 հազ ՀՀ դրամ***

«Գիտելիք հանուն զարգացման» համալիրի համար նախատեսվում է **150,000 հազ ՀՀ դրամ**:

***Ինչ վերաբերվում է «Դիլիջան» հետազոտության և զարգացման կենտրոնի և գրադարանի վերակառուցման աշխատանքների ընթացքին, ապա տեղեկացնում ենք, որ***

*2011 թ. ընթացքում* կատարվել են երկաթբետոնե կարկասի կառուցման աշխատանքները, միջնորմների և միջնապատերի կառուցման մոտ 80%-ը, հարթեցուցիչ շերտի մոտ 60%-ը, մետաղական կոնստրուկցիաների տեղադրման աշխատանքները: Մինչև 2011թ. վերջ պետք է իրականացվեն՝

- միջնապատերի և միջնորմների կառուցման վերջնական աշխատանքները,

- ապակյա ֆասադի մի մասը,

- կավարտվեն հարթեցուցիչ շերտի կառուցման աշխատանքները,

- սանտեխնիկական աշխատանքների մի մասը:

*2012թ. ընթացքում պետք է իրականացվեն՝*

- հատակների կառուցման աշխատանքները,
- պատերի ծածկում և ներկում,
- կախովի առաստաղի պատրաստում,
- ապակյա ֆասադի պատրաստում, պատուհանների տեղադրում, դռներ, վերելակների տեղադրում,
- գազամատակարարման, էլեկտրոմատակարարման, օդափոխության, հովացման համակարգերի տեղադրում, սանտեխնիկական աշխատանքներ,
- ցածր լարման գծերի անցկացում:

***Կացարանների մասով.***

2011թ. սկսվել են կացարանների հիմքերի հողային աշխատանքները: Մինչև 2011թ. վերջ կավարտվեն հիմքերի և պատերի կառուցման մի մասը:

2012թ. պետք է ավարտվի կացարանների համալիր շինարարությունը, բարեկարգման աշխատանքները:

***Բնակելի շենքի մասով.***

2011թ. կատարվել են հիմնային սալի կառուցման աշխատանքների մոտ 80%-ը: Մինչև 2011թ. տարվա վերջ կավարտվեն հողային հարկը և I հարկի մի մասը, մնացած աշխատանքները կավարտվեն 2012թ. ընթացքում՝

- շենքի կարկասի կառուցում,
- հարդարման աշխատանքներ,
- բարեկարգման աշխատանքներ:

***Գրադարանի մասով.***

Մինչև 2011 թ. կավարտվեն վերափոխման, ներքին սանտեխնիկական, էլեկտրալուսավորության աշխատանքները:

2012 թ. ընթացքում կավարտվեն հարդարման աշխատանքները:

2012 թ նախատեսվում է նաև Սիսիանում նոր Տարածքային դրամարկղային կենտրոնի կառուցում, որի համար նախատեսվում է **115,000.0հազ** ՀՀ դրամի կապիտալ ներդրում:

## 2. *Համակարգչային տեխնիկայի, գրասենյակային գույքի, կապի միջոցների և բանկի հիմնական գործունեությանն առնչվող այլ հիմնական միջոցների ձեռքբերում և կապիտալ վերանորոգում՝ 2,234,904.8 հազ. ՀՀ դրամ*

### *Համակարգչային տեխնիկա՝ 2,112, 646.0 հազ. ՀՀ դրամ:*

Համակարգչային տեխնիկայի ձեռքբերման ծրագիրը ընդգրկում է համակարգիչների, հարակից սարքավորումների, ծրագրային ապահովման, կապի սարքավորումների ձեռքբերում 2012 թվականի ընթացքում և հիմնված է հետևյալ սկզբունքների վրա, որոնք սահմանված են ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացման ռազմավարությամբ, տեղեկատվական անվտանգության քաղաքականությամբ և հավանության է արժանացել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից, բխում են միջազգային փորձից և բանկային համակարգի զարգացման միտումներից:

ա) ՀՀ կենտրոնական բանկի բոլոր ֆունկցիոնալ աշխատակիցները պետք է ունենան իրենց համակարգիչները: Այս խնդիրը ՀՀ ԿԲ-ում գործնականորեն լուծված է: Աշխատակայանների քանակի փոփոխությունը կատարվում է կառուցվածքային փոփոխությունների, ինչպես նաև որոշակի կիրառական ֆունկցիաների իրականացման համար լրացուցիչ համակարգիչներ պահանջի հետևանքով: Ընդ որում, օգտագործվող

համակարգչները՝ ինչպես սերվերները այնպես էլ աշխատանքային կայանները, ըստ անհրաժեշտության պետք է թարմացվեն: Համակարգիչների բարոյական և ֆիզիկական հնացումը (մաշվածքը) տեղի է ունենում 3-5 տարիների ընթացքում կախված օգտագործման ոլորտից. այդ պատճառով ՀՀ ԿԲ համակարգիչները որպես կանոն փոխարինվում են 5 տարին մեկ՝ հին համակարգիչները օտարվում են և դրանց փոխարեն ձեռք են բերվում նորերը:

բ) ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացված բանկային համակարգերի անխափան, հուսալի և անվտանգ աշխատանքը ապահովելու համար բոլոր համակարգիչները պետք է ապահովված լինեն անխափան էլեկտրասնուցման սարքերով: ՀՀ կենտրոնական բանկի համակարգիչները գործնականորեն համալրված են անխափան սնուցման սարքերով և այդ պատճառով նորերի ձեռք բերումը պայմանավորվում է հիմնականում նոր սերվերների և աշխատակայանների ձեռք բերումով կամ ֆիզիկապես և բարոյապես մաշված հների փոխարինումով:

գ) ՀՀ կենտրոնական բանկում տպող սարքերը պետք է օգտագործվեն օպտիմալ ձևով, այսինքն մինիմալ քանակությամբ ապահովեն մաքսիմալ արտադրողականություն և բարձր որակ: Դա ապահովվում է ցանցային լազերային տպող սարքերի օգտագործումով: Նախորդ տարիներին տվյալ սկզբունքի կիրառումը բերեց տպող սարքերի ընդհանուր քանակի էական նվազման: Բացառություն են կազմում փոքր չափի հատուկ բանկային ասեղնային կամ լազերային տպող սարքերը, որոնց միջոցով ֆինանսական գործառնություններ իրականացնող աշխատակիցները տպում են հատուկ ֆորմատի բազմաշերտ ֆինանսական բլանկներ կամ սահմանված ֆորմատի այլ բլանկներ:

դ) ՀՀ կենտրոնական բանկում օգտագործվող ստանդարտ ծրագրային համակարգերը և փաթեթները պետք է անընդհատ թարմացվեն նոր տարբերակներով՝ աշխարհում կիրառվող նոր տեղեկատվական տեխնոլոգիաներին համապատասխան: Հակառակ դեպքում ՀՀ ԿԲ-ը շատ արագ հետ կմնա տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումներից և հնարավոր չի լինի ներդնել և շահագործել նոր կիրառական ծրագրային համակարգեր, որոնք իրականացնում են ժամանակակից ֆինանսական և բանկային տեխնոլոգիաներ, ինչպես նաև արդյունավետ մշակել և պահպանել անընդհատ աճող ֆինանսական և տնտեսական տեղեկատվության ծավալները:

ե) ՀՀ կենտրոնական բանկի լոկալ համակարգչային ցանցը, միջբանկային համակարգչային ցանցը, էլեկտրոնային կապի և վճարումների այլ համակարգերը անընդհատ պետք է զարգանան հուսալիության և անվտանգության բարձրացման, արտադրողականության ավելացման, ժամանակակից տեխնիկական և ծրագրային միջոցների կիրառման ուղղություններով:

զ) ՀՀ կենտրոնական բանկում նոր կիրառական և ինֆրակառուցվածքի կառավարման ծրագրային նոր համակարգերի մշակման և տեստավորման գործընթացները պետք է ամբողջովին տարանջատված լինեն իրական համակարգերի շահագործման գործընթացներից: Այդ իրականացնելու համար ԿԲ-ում ստեղծվում է առանձին

տեստային լոկալ ցանց իր համակարգիչներով և սերվերներով, որոնք օգտագործվում են ծրագրավորողների և տեստավորողների կողմից նոր համակարգերի տեստավորման և մշակման աշխատանքներ կատարելու ժամանակ: Սա համապատասխանում է միջազգային ստանդարտներին և լավագույն փորձին:

ը) Կենտրոնական բանկում ինտերնետային ցանցը և լոկալ ցանցը միավորվում են մեկ միացյալ ցանցի կազմում: Միացյալ ցանցում կիրառվում են համապատասխան պաշտպանական ծրագրա-ապարատային միջոցներ, տեխնոլոգիական լուծումներ, ցանցային պաշտպանական համակարգեր և արձանագրություններ, կազմակերպչական միջոցառումներ, որոնք ապահովում են տեղեկատվական և հաշվողական ռեսուրսների պաշտպանությունը անթույլատրելի տիրապետումից, փոփոխումից և ոչնչացումից: Միացյալ ցանցը բաժանված է տարբեր պաշտպանական գոտիների: Ցանցի ինչպես օգտագործողները, այնպես էլ սերվերները և տեղեկատվական ռեսուրսները տրամաբանորեն բաժանված են տարբեր խմբերի՝ կախված նրանց գաղտնիության և աշխատանքի անընդհատության ապահովման կարևորությունից: Տարբեր խմբերը միավորվում են տարբեր վիրտուալ ցանցերում և կարող են փոխգործակցել միմյանց հետ միայն հատուկ պաշտպանական ապարատա-ծրագրային համակարգերի միջնորդությամբ ըստ սահմանված կանոնների: Նշված չափանիշներից ելնելով որոշ աշխատակայաններ կարող են օգտագործվել միայն ներքին կրիտիկական կիրառական համակարգերից օգտվելու համար, որոշ աշխատակայաններ՝ և ներքին ոչ կրիտիկական կիրառական համակարգերից օգտվելու համար և ինտերնետից օգտվելու համար, իսկ որոշները՝ միայն ինտերնետից օգտվելու համար: Բացի այդ, ինտերնետից օգտվող համակարգիչներից աշխատակիցները օգտվում են նաև արտաքին էլեկտրոնային փոստի ծառայություններից: Կրիտիկական սերվերները և տեղեկատվական ռեսուրսները պաշտպանվում են ոչ միայն արտաքին անթույլատրելի օգտագործումներից, այլ նաև ներքին օգտագործողների անթույլատրելի օգտագործումներից:

Համաձայն տվյալ սկզբունքների, ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացման ռազմավարության, ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացման ներկա վիճակի և զարգացման պլանների, կազմված է 2012 թվականի համակարգչային տեխնիկայի և ծրագրային համակարգերի ձեռքբերման ծրագիրը: 2012 թվականի կապիտալ ներդրումների ծրագիրն ունի այն առանձնահատկությունը, որ ձեռք են բերվելու ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համակարգչային տեխնիկան, սերվերային համակարգերը, լոկալ ցանցի, Երևանի մասնաշենքին կապող ցանցային ենթակառուցվածքի ու CBANet ցանցին միացնող ցանցային սարքավորումները, ինտերնետի հետ կապի ապահովման ցանցային սարքավորումները ու անվտանգության ապահովման սարքավորումները, ինչպես նաև այլ հարակից տեխնիկա ու համակարգեր: Ձեռք են բերվելու ու ներդրվելու է նաև Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համակարգիչները ու հարակից սարքավորումները, վիզուալիզացիայի սարքավորումներ, լոկալ ցանցի ու ինտերնետի հետ կապի ապահովման ցանցային ու պաշտպանական սարքավորումները, ինչպես նաև համապատասխան ծրագրային ապահովում:

ՀՀ կենտրոնական բանկում որպես կանոն ձեռք է բերվում բարձրորակ, այսպես կոչված, "Brand Name" կարգի համակարգչային տեխնիկա միայն մրցութային հիմունքներով: Համակարգչային տեխնիկան, որպես կանոն DELL, Hewlett Packard, IBM,Cisco Systems, Juniper, Huawei-3Com և այլ հանրահայտ ֆիրմաների արտադրանքն է: Փորձը ցույց է տալիս, որ նշված տեսակի տեխնիկան ունի բարձր որակ, լավ և երկարաժամկետ (3 տարի) երաշխիքային սպասարկում, բարձր հուսալիություն և տեխնիկական զարգացման լայն հնարավորություններ: Հաշվի առնելով բանկային ավտոմատացված համակարգերին ներկայացվող տեխնիկական ռիսկերի նվազեցման, հուսալիության, անխափան աշխատանքի և անվտանգության բարձր պահանջները, նման բարձրորակ տեխնիկայի օգտագործումը ՀՀ կենտրոնական բանկում անհրաժեշտություն է: Ստորև բերվող հաշվարկները հիմնված են նշված համակարգչային տեխնիկայի ստանդարտ գների վրա, որոնք մոտավորապես 25% ավելի թանկ են ոչ "Brand Name" համակարգչային տեխնիկայից: Ձեռքբերման մրցութային եղանակը թույլ է տալիս ձեռք բերել տեխնիկան հայկական շուկայում առկա մինիմալ գներով: Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների վարչության կապիտալ ներդրումների ծրագրով 2012թ. նախատեսվում են հետևյալ ձեռքբերումները: Ստորև բերվող ծախսերում հաշվի է առնված այն հանգամանքը, որ ԿԲ-ը 2005 թվականից վճարում է ավելացված արժեքի հարկ, հետևաբար բոլոր ծախսերի հաշվարկում ներառված է 20% ԱԱՀ:

- **Համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների գծով կապիտալ ներդրումները պլանավորվել են՝ 847,189.0 հազ դրամ,**

**Համակարգչային տեխնիկայի և հարակից սարքավորումների մեջ են մտնում՝**

1. **համակարգիչներ՝ 303,120.0 հազ դրամ**:

2012 թ. նախատեսվում է ձեռք բերել 14 նոր համակարգիչներ, որոնցից՝

- 5-ը կկազմեն ԿԲ համակարգիչների պահուստային ֆոնդը
- 9-ը կենտրոնական բանկի ստորաբաժանումների համար հիմնականում նոր աշխատատեղերի համալրման համար:

2012թ. կենտրոնական բանկի աշխատատեղերում օգտագործվող ( ոչ ինտերնետից օգտվելու համար) և հատուկ նշանակության ֆունկցիոնալ համակարգիչներից և փորձարկումների ստենդում օգտագործվող համակարգիչներից 121-ը և ԿԲ-ի պահուստային բանկում օգտագործվող համակարգիչներից 3-ը կլինեն հինգ տարուց ավել շահագործման մեջ, հետևաբար նրանք ենթակա են փոխարինման նորերով կենտրոնական բանկում ընդունված նորմերի համաձայն, որոնք հաստատվել են կենտրոնական բանկում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և զարգացման ռազմավարական ծրագրով:

Այսպիսով Երևանի ու Ծաղկաձորի մասնաշենքերիի համակարգիչների, որոնք պետք է փոխարինեն հինգ տարուց ավել շահագործվող համակարգիչները և ձեռքբերվելիք

հավելյալների ընդհանուր քանակը կազմում է 138, իսկ արժեքը՝ 138* 720,000դրամ =99,360,000 դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել 200 անհատական համակարգիչներ, որոնցից 150-ը աշխատատեղերի համար, 5- դրամարկղային կենտրոնի համար, 7-ը անվտանգության համակարգերի համար, 10-ը ֆունկցիոնալ նշանակության կայաններ, 10-ը համակարգերի ադմինիստրավորման ու կառավարման համար, 7-ը խորհրդի անդամների աշխատատեղերի համար, 11-ը լսարանների, դահլիճների ու այլ ծառայողական նշանակության համար: Ընդհանուր արժեքը կկազմի 200*720,000դրամ =144,000,000 դրամ:

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համար նախատեսվում է ձեռք բերել 83 անհատական համակարգիչներ, որոնցից 41-ը սովորական համակարգիչներ, 42-ը հատուկ մուլտիմեդիա նշանակության համակարգիչներ: Ընդհանուր արժեքը կկազմի 83*720,000դրամ =59,760,000 դրամ:

Ընդամենը՝ 303,120,000 դրամ:

2. **Սերվերներ՝ 53,200.0 հազ դրամ:**

2012թ. կենտրոնական բանկում օգտագործվող սերվերներից 1-ը կլինեն հինգ տարուց ավել շահագործման մեջ, հետևաբար այն ենթակա է փոխարինման նորերով կենտրոնական բանկում ընդունված նորմերի համաձայն, որոնք հաստատվել են կենտրոնական բանկում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և զարգացման ռազմավարական ծրագրով: Այս նպատակով անհրաժեշտ է ձեռք բերել 1 նոր սերվեր: Սերվերի ձեռք բերման արժեքը կկազմի 3,800,000դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել 8 սերվերներ, որոնցից 2-ը SWIFT-ի տերմինալի պահուստային կրկնօրինակի համար, 2-ը անվտանգության համակարգերի համար, 3-ը ֆինանսական դիտարկումների կենտրոնի համակարգերի պահուստային կրկնօրինակների համար, 1-ը BLOOMBERG համակարգի հետ փոխգործակցող ծրագրերի համար: Սերվերի ձեռք բերման արժեքը կկազմի 8*3,800,000դրամ=30,040,000դրամ: Նրանցից 4-ը պետք է լինեն դարակային սերվերներ, միավորված մեկ պահարանում (պահուստայինները կտեղադրվեն արդեն առկա պահարանում), իսկ SWIFT համակարգի ու անվտանգության համակարգի սերվերները՝ առանձնացված:

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համար նախատեսվում է ձեռք բերել 5 սերվերներ, որոնցից 2-ը EPG Labs համակարգի համար (հիմնական ու պահուստային), 2-ը որպես գրադարանային համակարգի ու ֆայլ սերվեր (հիմնական ու պահուստային), 1-ը ինտերնետային ուսուցման կազմակերպման համար: Սերվերի ձեռք բերման արժեքը կկազմի 5*3,800,000դրամ=19,000,000դրամ:

Ընդամենը՝ 53,200,000 դրամ:

3. **500 VA անխափան սնուցման սարք՝ 14,085.0հազ դրամ**:

ՀՀ կենտրոնական բանկի ավտոմատացված բանկային համակարգերի անխափան, հուսալի և անվտանգ աշխատանքը ապահովելու համար բոլոր համակարգիչները պետք է ապահովված լինեն անխափան էլեկտրասնուցման սարքերով: 2012 թ. կենտրոնական բանկի աշխատատեղերում օգտագործվող համակարգիչների համար նախատեսվում ձեռք բերել 41 հատ անխափան սնուցման սարքեր՝ հնացածները փոխարինելու և նոր աշխատակայանները համալրելու համար, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 30* 45,000դրամ = 1,395,000 դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել 200 հատ անխափան սնուցման սարքեր բոլոր համակարգիչները համալրելու համար, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 200* 45.000դրամ = 9,000,000 դրամ:

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համար նախատեսվում է ձեռք բերել 83 հատ անխափան սնուցման սարքեր բոլոր համակարգիչները համալրելու համար, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 83* 45,000դրամ = 3,735,000 դրամ:

Ընդամենը՝ 14,085,000 դրամ:

4. **Հզոր անխափան սնուցման սարքեր՝ 14,720.0հազ դրամ:**

2012թ. անխափան սնուցման սարքեր նախատեսվում է ձեռք բերել հնացածները փոխարինելու ՝ 1 հատ: Այսպիսով անխափան սնուցման սարքերի ձեռք բերման արժեքը կկազմի 1*320.000 դրամ = 320.000դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել 42 հատ 1500VA հզորությամբ անխափան սնուցման սարքեր, որից 2-ը առանձնացված սերվերների համար, 2-ը դարակային սերվերների համար, 4-ը երկու բլեյդ սերվերային համալիրների համար, 14-ը լոկալ ցանցի կոմունիկացիոն կենտրոնների համար, 4-ը գլխավոր սերվերային սենյակի կոմունիկացիոն սարքավորումների երկու դարակային պահարանների համար, 16-ը բանկերի սերվերային սենյակի 8 դարակային պահարանների համար: Ընդհանուր արժեքը կկազմի 42* 320,000դրամ = 13,440,000 դրամ:

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համար նախատեսվում է ձեռք բերել 3 հատ 1500VA հզորությամբ անխափան սնուցման սարքեր, որից 2-ը դարակային սերվերների համար, 1-ը վիդեոկոնֆերանսի համակարգի համար: Ընդհանուր արժեքը կկազմի 3* 320,000դրամ = 960,000 դրամ:

Ընդամենը՝ 14,720,000 դրամ:

5. **Notebook տիպի համակարգիչները՝ 41,650.0հազ դրամ:**

2012թ. նախատեսվում է ձեռք բերել 22 Notebook տիպի համակարգիչ, որոնք կփոխարինեն կենտրոնական բանկի ստորաբաժանումներում հինգ տարուց ավել շահագործվող համակարգիչներին՝ կենտրոնական բանկում ընդունված նորմերի համաձայն, որոնք հաստատվել են կենտրոնական բանկում տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման և զարգացման ռազմավարական ծրագրով: Բացի այդ, նախատեսվում է ձեռք բերել ևս 1 Notebook տիպի համակարգիչ , որը օգտագործվելու է նոր աշխատատեղում: Ընդհանուր արժեքը կկազմի 23*850,000դրամ = 19,550,000 դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել 9 հատ Notebook տիպի համակարգիչներ, որից 8-ը կենտրոնական բանկի խորհրդի նիստերի դահլիճի համար, իսկ 1-ը՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայության ղեկավարի համար: Ընդհանուր արժեքը կկազմի 9*850.000դրամ = 7.650.000դրամ:

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համար նախատեսվում է ձեռք բերել 17 հատ Notebook տիպի համակարգիչներ: Ընդհանուր արժեքը կկազմի 17*850.000դրամ = 14.450.000դրամ:

6. **Այլ համակարգչային սարքավորումներ՝ 206,044.0հազ դրամ**:

Ներկայումս լայն տարածում են ստանում տերմինալային համալիրները, որոնց կազմում ընգրկված են սերվեր, տերմինալներ, որոնք փոխարինում են համակարգիչներին, և ծրագրային ապահովում, որը թույլ է տալիս աշխատակցին աշխատել տերմինալի միջոցով սերվերի հետ այնպես, ինչպես նա կաշխատեր իր համակարգիչի հետ: Տերմինալային սերվերների ներկայիս լայն տարածումը պայմանավորված է տերմինալների գների նվազման հետ, ինչը դրանց օգտագործումը դարձնում է բավականին արդյունավետ: Բացի այդ, տերմինալային սերվերների կիրառումը թույլ է տալիս բարձրացնել տեղեկատվական անվտանգության և հակավիրուսային պաշտպանության մակարդակը, բարձրացնում է աշխատակայանների կառավարելիությունը, նրանց սպասարկման արդյունավետությունը և օգտագործման ճկունությունը: ԿԲ-ի մի շարք աշխատատեղերում նպատակահարմար է օգտագործել տերմինալային սերվերները, մասնավորապես, գործառնական, հաշվապահական հաշվառման, կանխիկ դրամով գործառնությունների և այլ վարչություններում, այցելուների կենտրոնում: Սակայն այդ տեխնոլոգիայի լայնածավալ ներդրման համար անհրաժեշտ է որոշ ժամանակ փորձնական շահագործել նման համակարգը և հետո միայն կիրառել իրական աշխատանքի ժամանակ: Ուստի նախատեսվում է փորձնական շահագործման համար ծրագրավորման բաժնում ներդնել 20 տերմինալով համալրված տերմինալային սերվեր, որի միջոցով իրականացնել ծրագրերի մշակման և տեստավորման աշխատանքները: Այդ նպատակով պլանավորվում է ձեռք բերել 20 հատ տերմինալ և համապատասխան ծրագրային ապահովում, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 10.000.000 դրամ, ընդորում մեկ տերմինալի արժեքը՝ 500.000 դրամ ներառում է նաև մոնիտորի և անհրաժեշտ ծրագրային ապահովման արժեքը:

ԿԲ-ի դահլիճների և խորհրդակցությունների սենյակների համար նախատեսվում է ձեռք բերել և գործարկել ժամանակակից պրոյեկցիոն ինտերակտիվ գրատախտակներ, որոնք թույլ են տալիս գրատախտակին արտապատկերել համակարգչից ցանկացած պատկեր և տեքստ, հատուկ մարկերներով կատարել այդ պատկերների վրա գրառումներ և ջնջումներ ու նորից հիշել փոփոխված պատկերները համակարգչում: Նախատեսվում է ձեռք բերել նման համակարգի 2 կոմպլեկտ, որոնց ամեն մեկի արժեքը կկազմի 1.900.000 դրամ, իսկ ընդհանուր գումարը կկազմի 3.800.000 դրամ:

Անհրաժեշտ է ձեռք բերել համակարգերի տվյալների հենքերի պահուստային կրկնօրինակների ստեղծման և պահուստային բանկ տվյալների տեղափոխման, ինչպես նաև համակարգիչները սպասարկելու համար 3 հատ արտաքին հիշողության սարքեր USB ինտերֆեյսով 500GB ծավալով՝ 3* 50.000 դրամ=150.000 դրամ, 2 հատ DVD սկավառակներ գրող սարք՝ 2* 30.000 դրամ=60.000 դրամ: ԿԲ «Օգնության ծառայության» գործունեության համար անհրաժեշտ է հեռախոսազանգերի գրանցման սարք 90.000 դրամ արժեքով: Ընդամենը՝ 300.000 դրամ:

Ընդամենը՝ 14.100.000 դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել հետևյալ սարքավորումները.

- տեսակոնֆերանսի համակարգ երկու մեծ մոնիթորով, որը կմիացվի ԿԲ-ի ներկայումս գործող տեսակոնֆերանսի համակարգին: Համակարգը կօգտագործվի ինչպես գիտաժողովների, կոնֆերանսների ու ուսուցումների համար, այնպես էլ թույլ կտա ԿԲ Դիլիջանում ու Երևանում գտնվող աշխատակիցներին կազմակերպել տեսաքննարկումներ ու տեսակոնֆերանսներ: Համակարգի ձեռք բերման ու գործարկման հետ կապված ծախսերը կկազմեն՝ տեսակոնֆերանսի համակարգը 9.000.000 դրամ, մոնիթորները 1.102.000 դրամ *2 = 2.204.000 դրամ: Ընդամենը՝ 11.204.000 դրամ: Գները վերցված են 2010 թվականի ԿԲ-ի մատակարարման պայմանագրերից:
- պրոյեկցիոն ինտերակտիվ գրատախտակներ 5 հատ լսարանների ու խորհրդակցությունների դահլիճների համար, 5 * 1.900.000 դրամ = 9.500.000 դրամ: Գները վերցված են 2010 թվականի ԿԲ-ի մատակարարման պայմանագրերից:
- ԿԲ-ի սերվերային սենյակի սերվերային ու ցանցային սարքավորումների անխափան էլեկտրասնուցումը ապահովող հզոր անխափան սնուցման սարքեր 40 – 60Kw իրենց կառավարումով 2 հատ: Ծախսերը կկազմեն 2 * 15.000.000 դրամ = 30.000.000 դրամ: Գները հիմնված են Emerson և APC ընկերությունների տվյալների վրա:
- առևտրային բանկերի ու ԱրՔա համակարգի պահուստային սերվերների սերվերային սենյակների սերվերային ու ցանցային սարքավորումների անխափան էլեկտրասնուցումը ապահովող հզոր անխափան սնուցման սարքեր 40 – 60Kw իրենց կառավարումով՝ 2 հատ: Ծախսերը կկազմեն 2 * 15.000.000 դրամ = 30.000.000 դրամ: Գները հիմնված են Emerson և APC ընկերությունների տվյալների վրա:
- ԿԲ-ի սերվերային սենյակի սերվերային ու ցանցային սարքավորումների տեղակայման համար նախատեսված հատուկ դարակային պահարաններ (Server Rack) 3 հատ մեծ չափի (41U): Ծախսերը կկազմեն 3 * 1.700.000 դրամ = 5.100.000 դրամ: Գները հիմնված են Emerson ընկերությունների տվյալների վրա:

- առևտրային բանկերի պահուստային սերվերների սերվերային սենյակների սերվերային ու ցանցային սարքավորումների տեղակայման համար նախատեսված հատուկ դարակային պահարաններ (Server Rack) 8 հատ մեծ չափի (41U): Ծախսերը կկազմեն 8 * 1.700.000 դրամ = 13.600.000 դրամ: Գները հիմնված են Emerson ընկերությունների տվյալների վրա:
- ԿԲ-ի կենտրոնի կոմուտացիոն սենյակների լոկալ ցանցի սարքավորումների տեղակայման համար նախատեսված հատուկ դարակային պահարաններ (Server Rack) 14 հատ փոքր չափի (21U): Ծախսերը կկազմեն 14 * 660.000 դրամ = 9.240.000 դրամ: Գները հիմնված են Emerson ընկերությունների տվյալների վրա:
- շարժական թվային պրոյեկտորներ տարբեր սենյակներում սեմինարներ կազմակերպելու համար՝ 3 հատ: Ծախսերը կկազմեն 3 * 200.000 դրամ = 600.000 դրամ:

Ընդամենը՝ 109.244.000 դրամ:

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համար նախատեսվում է ձեռք բերել՝

- սերվերային ու ցանցային սարքավորումների տեղակայման համար նախատեսված հատուկ դարակային պահարաններ (Server Rack) 1 հատ մեծ չափի (41U): Ծախսերը կկազմեն 1 * 1.700.000 դրամ = 1.700.000 դրամ: Գները հիմնված են Emerson ընկերությունների տվյալների վրա:
- վիզուալիզացիայի համակարգեր, մասնավորապես՝ տեսակոնֆերանսի համակարգ, ինտերակտիվ պրոեկցիան գրատախտակներ մոնիտորներով, ինտերակտիվ մոնիտորներ, տեսպատ, տեսադասերի կազմակերպման սարքավորումներ, արտապատկերման ու ձայնային համակարգեր և այլն: Ծախսերը կկազմեն 81.000.000 դրամ:

Ընդամենը՝ 82.700.000 դրամ:

Այսպիսով այս ենթահոդվածի սարքավորումների ձեռք բերման արժեքը կկազմի 206.044.000դրամ:

## 7. **Արագագործ լազերային տպող սարքավորում՝ 22,080.0հազ ՀՀ դրամ**

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի ստորաբաժանումների համար ձեռք է բերվելու 2 հատ արագագործ լազերային տպող սարք, որոնք օգտագործվելու են նոր ստեղծվող բաժիններում: Ընդհանուր արժեքը կկազմի 2* 920.000դրամ = 1.840.000 դրամ:

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել 20 հատ արագագործ լազերային տպող սարք, որից 15-ը աշխատատեղերի համար՝ 1-ը 10 աշխատատեղի համար, 1-ը համակարգերի ադմինիստրավորման համար, 1-ը անվտանգության համար, 1-ը աշխատակազմի համար, 1-ը խորհրդի անդամների համար ու 1-ը պահեստային: Ընդհանուր արժեքը կկազմի 20* 920.000դրամ = 18.400.000 դրամ:

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համար նախատեսվում է ձեռք բերել 2 հատ արագագործ լազերային տպող սարք: Ընդհանուր արժեքը կկազմի 2* 920.000դրամ = 1.840.000 դրամ:

Ընդամենը՝ 22.080.000 դրամ:

8. **Փոքր լազերային տպող սարքավորում՝ 1,440.0 հազ ՀՀդրամ**:

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի գործառնական վարչության համար ձեռք է բերվելու 7 հատ փոքր լազերային տպող սարք, որոնք կփոխարինենն ներկայումս օգտագործվող, սակայն ֆիզիկապես մաշված տպող սարքերին: Ընդհանուր արժեքը կկազմի 7* 120.000դրամ = 840.000 դրամ:

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել 5 հատ փոքր լազերային տպող սարք աշխատակազմի ու լսարանների համար: Ընդհանուր արժեքը կկազմի 5* 120.000դրամ = 600.000 դրամ:

Ընդամենը՝ 1.440.000 դրամ:

9. **Գունավոր տպող սարքավորում՝ 2,400.0 հազ ՀՀ դրամ**

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի ՏևՀՏ վարչության համար նախատեսվում է ձեռք բերել A3 ֆորմատի գունավոր տպող սարք ցանցային ենթակառուցվածքների սխեմաների տպման համար: Ընդհանուր արժեքը կկազմի 800.000 դրամ:

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել 1 հատ գունավոր տպող սարք: Ընդհանուր արժեքը կկազմի 800.000 դրամ:

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համար նախատեսվում է ձեռք բերել 1 հատ գունավոր տպող սարք: Ընդհանուր արժեքը կկազմի 800.000 դրամ:

Ընդամենը՝ 2.400.000 դրամ:

10. **Գունավոր փոքր լազերային տպող սարքավորում՝ 310.0 հազ ՀՀ դրամ**:

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի հաշվապահական հաշվառման վարչության համար նախատեսվում է ձեռք բերել 1 հատ գունավոր փոքր լազերային տպող սարք՝ որակյալ հաշվետվություններ պատրաստելու համար: Ընդհանուր արժեքը կկազմի 155.000 դրամ:

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել 1 հատ գունավոր փոքր լազերային տպող սարք: Ընդհանուր արժեքը կկազմի 155.000 դրամ:

Ընդամենը՝ 310.000 դրամ:

11. **Սկաներ՝ 240.0հազ դրամ:**

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության համար նախատեսվում է ձեռք բերել 1 հատ սկաներ՝ լեցենզավորման գործընթացում ստացվող փաստաթղթերի էլեկտրոնայնացման համար: Ընդհանուր արժեքը կկազմի 60.000 դրամ:
2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի համար նախատեսվում է ձեռք բերել 2 հատ սկաներ ստորաբաժանումների համար: Ընդհանուր արժեքը կկազմի 2*60.000 դրամ = 120.000 դրամ:

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համար նախատեսվում է ձեռք բերել 1 հատ սկաներ: Ընդհանուր արժեքը կկազմի 60.000 դրամ:
Ընդամենը՝ 240.000 դրամ:

12. **Բլեյդ սերվերային համալիր՝ 183,300.0 հազ ՀՀ դրամ**

ԿԲ-ում գործող HP ընկերության արտադրության Բլեյդ սերվերային համալիները ներկայումս օգտագործվում են ինչպես իրական համակարգերի համար, այնպես էլ նոր համակարգերի մշակման և տեստավորման համար: ԿԲ-ի կիրառական համակարգերի աճող քանակը պահանջում է նոր սերվերներ նրանց գործարկման և շահագործման համար: 2011 թվականի ձեռք է բերվում նոր Բլեյդ սերվերային համալիր, ուր առանձնացվելու են համակարգերի մշակման ու տեստավորման համար օգտագործվող սերվերները, իսկ գործող HP Բլեյդ հիմնական ու պահուստային համալիրները օգտագործվլու են միայն իրական համակարգերի համար:

Սակայն կենտրոնական բանկում մշակվող ու ձեռք բերվող համակարգերը բարդանում են ու նրանց ինչպես մշակման, այնպես էլ տեստավորման համար պահանջվում են ավելի շատ սերվերային ռեսուրսներ: Բարդ տեստավորումներ են պահանջում նաև տեղեկատվական անվտանգության ու ՏՏ ենթակառուցվածքի կառավարման համար նախատեսված ծրագրային համակարգերը, ինչը նույնպես պահանջում է սերվերային ռեսուրսներ: Բացի այդ նախատեսվում է առանձնացնել հատուկ ֆայլ սերվերներ սահմանափակ հասանելիության տեղեկատվության պահպանման համար, ինչի համար անհրաժեշտ են լրացուցիչ սերվերներ: Ներկայիս գործող Բլեյդ սերվերային համալիրների Արտաքին հիշողության SAN համակարգերի ծավալները գրեթե ամբողջությամբ զբաղված են պահպանվող տվյալներով: Սակայն ԿԲ-ում օգտագործվող ու պահպանվող էլեկտրոնային տեղեկատվության ծավալները անընդհատ աճում են ու դրանց պահպանման համար պահանջվում են արտաքին հիշողության նոր հզորություններ:

Վերը նշված նպատակներով 2012 թվականին նախատեսվում է նոր Բլեյդ սերվերային համալիրի համար ձեռք բերել լրացուցիչ 5 բլեյդ սերվերներ, 2 արտաքին սկավառակների պահարաններ ու 48 արտաքին սկավառակներ SATA տեսակի: Այս ձեռք բերումների հետ կապված ծախսերը կկազմեն՝ 5 սերվեր* 3.500.000 դրամ = 17.500.000 դրամ, 2 պահարան * 800.000 դրամ = 1.600.000 դրամ, 48 սկավառակ * 400.000 դրամ = 19.200.000 դրամ: Նախատեսվում է նաև բարձրացնել գործող IBM Բլեյդ սերվերային

համալիրի արտաքին հիշողության համակարգի հուսալիությունը, ինչի համար ձեռք է բերվելու 2 հատ RAID Controller սարքերը՝ 2* 1.500.000 դրամ = 3.000.000 դրամ: Ընդամենը՝ 41.300.000 դրամ:

Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում նախատեսվում է ունենալ ԿԲ-ի ավտոմատացված համակարգերի պահուստային կրկնօրինակներ, ինչը թույլ կտա Երևանի մասնաշենքում այդ համակարգերի սերվերային համալիրների անաշխատունակության դեպքում անցնել Դիլիջանի սերվերային համալիրների հետ աշխատանքի: Ընդ որում, նման դեպքում Երևանի աշխատակայանների աշխատանքը Դիլիջանում տեղակայված սերվերային համալիրների հետ պետք է լինի այնպես, ինչպես Երևանում տեղակայված սերվերային համալիրների հետ: Փաստորեն Դիլիջանում ստեղծվում է կենտրոնական բանկի հիմնական սերվերայի համալիրի պահուստային կրկնօրինակ (Back-up): Այդ նպատակով Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում ստեղծվում է կենտրոնական բանկի սերվերային սենյակ, որում պետք է տեղակայվեն երկու բլեյդ համալիրներ: Մեկը օգտագործվելու է ԿԲ-ի ներքին ավտոմատացված համակարգերի համար (անվանենք Ներքին սերվերային համալիր) ու իր սերվերային և արտաքին հիշողության հզորություններով համապատասխանում է ներկայիս HP բլեյդ համալիրին: Մյուսը օգտագործվելու է ԿԲ-ի արտաքին Ինտերնետային համակարգերի համար՝ կայք, էլ. Փոստ, Պրոքսի և այլ (անվանենք Արտաքին սերվերային համալիր) ու իր սերվերային և արտաքին հիշողության հզորություններով համապատասխանում է ներկայիս IBM բլեյդ համալիրին: Նշված սերվերային համալիրների ձեռք բերման, տեղակայման ու գործարկման հետ կապված ծախսերը կկազմեն մոտավորապես 110.000.000 դրամ Ներքին սերվերային համալիրը ու 32.000.000 դրամ Արտաքին սերվերային համալիրը: Ընդհանուր ծախսը կկազմի 142.000.000 դրամ:

Ներկայացված ծախսերը հաշվարկվել են հիմնված ԿԲ-ի կողմից նախկինում ձեռք բերված բլեյդ համալիրների գների վրա ու միջազգային շուկայում նման համակարգերի ներկայիս գների վրա:

Ընդամենը՝ 183.300.000 դրամ:

13. **Փաստաթղթերի մշակման սարքավորումներ՝ 4,600.0հազ դրամ:**

2012 թվականին ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում ստեղծվելու է հնարավորություն ամբողջությամբ իրականացնել կենտրոնական բանկի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի աշխատանքը, եթե դա լինի անհնարին Երևանի մասնաշենքում: Այդ նպատակով այնտեղ պետք է լինի հնարավորություն բոլոր արտաքին փաստաթղթերի սկանավորման ու էլեկտրոնային տեսքով համակարգ մուտքագրման համար: Սկանավորման համար պետք է ձեռք բերել մեկ սկաներ KODAK i1440 (A3) մակնիշի 3.600.000 դրամ արժողությամբ ու մեկ սկաներ KODAK I 1320 1.000.000 դրամ արժողությամբ:

Ընդհանուր ծախսը կկազմի 4.600.000 դրամ: Գները վերցված են 2009 ու 2010 թվականների ԿԲ-ի համանման ձեռքբերումների պայմանագրերից:

- **Ցանցային սարքավորումների գծով կապիտալ ներդրումները պլանավորվել են՝ 338,950.0 հազ ՀՀ դրամ:**

Ցանցային սարքավորումների գծով կապիտալ ներդրումների մեջ են մտնում՝

1. **Լոկալ ցանցի կոմունիկացիոն սարքավորումներ՝ 245,140.0հազ ՀՀ դրամ**:

2012 թվականի լոկալ ցանցի հետ կապված կապիտալ ներդրումները ունեն 4 ուղղություններ՝ ԿԲ-ի հիմնական մասնաշենքի լոկալ ցանցի հուսալիության բարձրացում, պահուստային բանկի լոկալ ցանցի վերազինում, ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում լոկալ համակարգչային ցանցի ստեղծում ու նրա միացում ԿԲ-ի Երևանի մասնաշենքին, Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» լոկալ ցանցի ստեղծում ու նրա միացում ուսումնահետազոտական կենտրոնին ու «Թումո կենտրոնին» (EPG Labs):

2010 թվականին սկսվել է շահագործվել ԿԲ-ի միացյալ լոկալ ցանցը, որում միավորված են լոկալ համակարգչային ցանցը և ինտերնետային ցանցը՝ ապահովելով անվտանգության և պաշտպանվածության պահանջվող մակարդակ: 2011 թվականին վերակառուցված միացյալ ցանցը գործարկվել է շահագործման ԿԲ-ի ամբողջ տարածքում, ինչը էապես բարձրացրել է ցանցի պաշտպանվածության աստիճանը և արդյունավետությունը: Ցանցի անխափան աշխատանքը ապահովելու համար անհրաժեշտ է ունենալ որոշ քանակությամբ պահուստային ցանցային սարքավորումներ: Այդ սարքավորումների մի մասը՝ հիմնական հանգույցների շլյուզերի ու երթուղիչների համար, արդեն առկա են ցանցում ու միացված են ցանցում իրական աշխատանքի կլաստերների կազմում: Դա թույլ է տալիս սարքավորումներից մեկի խափանման դեպքում ավտոմատ անցնել մյուսին՝ չընդհատելով ցանցի աշխատանքը: Սակայն անհրաժեշտ է ունենալ պահուստային սարքավորումներ նաև աշխատակայանների միացման կոմուտատորների համար: Այդ ցանցային կոմուտացիոն սարքավորումները լինում են որպես կանոն Juniper կամ Cisco հանրահայտ ընկերությունների արտադրության: Այդ նպատակով անհրաժեշտ է

- ձեռք բերել հետևյալ սարքավորումները՝ 2 հատ 24 պորտով և 2 հատ 48 պորտով սարքավորում: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 2* 1.300.000 դրամ + 2* 2.000.000 դրամ = 6.600.000 դրամ: Գները հիմնված են 2010 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:

- ձեռք բերել պահեստային Juniper EX4200-24FP օպտիկական երթուղիչը՝ ցանցի երկու հատվածների (հին և նոր մասնաշենքերում) նույնացումը և հուսալիությունը ապահովելու համար: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 11.700.000 դրամ: Գները հիմնված են 2010 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:

- ձեռք բերել միացյալ ցանցում կիրառվող Juniper եվ Catalist ցանցային կոմուտատորների համար 12 հատ օպտիկական ինտերֆեյսի կցատեղ ու 12 հատ պղնձյա ինտերֆեյսի կցատեղ(GBIC): Դա կապահովի նշված սարքավորումների միացումը երթուղիչներին ավելի հուսալի և արագագործ օպտիկական կապուղիներով: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ օպտիկականի համար 12* 120.000 դրամ = 1.440.000 դրամ, պղնձյայի համար 12* 100.000դրամ = 1.200.000 դրամ: Գները հիմնված են 2010 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:

- ձեռք բերել օպտիկական-Ethernet փոխակերպիչներ 1 պորտանոց 10 հատ ՝ 10*30.000 դրամ = 300.000 դրամ:

2012 թվականին նախատեսվում է փոխարինել պահուստային բանկի լոկալ ցանցի կոմուտատորները, քանի որ նրանք բարոյապես ու ֆիզիկապես մաշվել են: Փոխարինման համար անհրաժեշտ է ձեռք բերել 2 հատ 24 պորտով և 1 հատ 48 պորտով սարքավորում: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 2* 1.300.000 դրամ + 1* 2.000.000 դրամ = 4.600.000 դրամ: Գները հիմնված են 2010 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:

Ընդամենը ծախսերը կկազմեն՝ 25.840.000 դրամ

ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի լոկալ ցանցի ստեղծման համար նախատեսվում է կատարել հետևյալ կապիտալ ներդրումները՝

- ձեռք բերել աշխատակայանների միացման համար ու ցանցային պաշտպանական գոտիների համար կոմուտատորներ Juniper կամ Cisco մակնիշի 7 հատ 24 պորտով (6 հիմնական ու 1 պահեստային) և 22 հատ 48 պորտով (20 հիմնական ու 2 պահեստային) սարքավորում: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 7* 1.300.000 դրամ + 22* 2.000.000 դրամ = 53.100.000 դրամ: Գները հիմնված են 2010 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:

- ձեռք բերել 3 հատ (2 հիմնական ու 1 պահեստային) Juniper EX4200-24FP օպտիկական երթուղիչներ կոմուտատորները միավորելու համար ու կլաստերային կառուցվածք ստեղծելու համար, 1 հատ Juniper EX4200-24FP օպտիկական երթուղիչներ ցանցի արտաքին անվտանգության գոտի ստեղծելու համար: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 4*11.700.000 դրամ = 46.800.000 դրամ: Գները հիմնված են 2010 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:

- ձեռք բերել լոկալ ցանցի ներքին անվտանգության գոտիների ստեղծման ու անվտանգության կազմակերպման համար 2 հատ ցանցային շլյուզային համակարգեր Juniper SRX 3400 մակնիշի: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 2*28.200.000 դրամ = 56.400.000 դրամ: Գները հիմնված են 2010 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:

- ձեռք բերել 2 հատ արտաքին սահմանային կոմուտատորներ, որոնք թույլ կտան ԿԲ-ի Դիլիջանի կենտրոնի ու Երևանի հիմնական մասնաշենքի լոկալ ցանցերը միացնել միմյանց 2 հատ 1Գբիթ/վ թողունակությամբ կապերով՝ մեկի Արմենթելի, իսկ մյուսը GNC Alfa ընկերության ցանցային ենթակառուցվածքներով, ապահովելով համապատասխան անվտանգության ու հուսալիության մակարդակ: Կոմուտատորները կիրականացնեն նաև առևտրային բանկերի միացումը առանձնացված օպտիկական կապուղիներով միանալ իրենց պահուստային սերվերային կենտրոններին,որոնք տեղակայվելու են ՀՀ ԿԲ

Դիլիջանի կենտրոնում: Նախատեսվում է ձեռք բերել Juniper MX 80 տիպի կոմուտատորներ 20 հատ օպտիկական պորտերով: 2 սարքավորումների ընդհանուր արժեքը կկազմի մոտավորապես 48.500.000 դրամ:

- ձեռք բերել 1 հատ երթուղիչ Cisco 2900 տեսակի երթուղիչ Դիլիջանի գրադարանի հետ օպտիկական կապուղով կապ ապահովելու համար: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 1*2.000.000 դրամ = 2.000.000 դրամ: Նշված կապի անվտանգությունը ապահովելու համար կպահաջվի նաև պաշտպանիչ հրապատ սարքավորում Cisco ASA 5500 տեսակի, որի արժեքը կկազմի մոտ 3.000.000 դրամ: Գները հիմնված են 2009 թվականի նման սարքեր ձեռք բերման մրցույթի արդյունքների վրա:

Ընդամենը ծախսերը կկազմեն՝ 209.800.000 դրամ :

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» լոկալ ցանցի ստեղծման ու այդ ցանցը Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնին ու «Թումո կենտրոնին» (EPG Labs) միացնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ կապիտալ ներդրումները.

- ձեռք բերել աշխատակայանների միացման համար կոմուտատորներ Juniper կամ Cisco մակնիշի 5 հատ 24 պորտով սարքավորում: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 5* 1.300.000 դրամ = 6.500.000 դրամ: Գները հիմնված են 2010 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:
- ձեռք բերել 1 հատ Cisco 2900 տեսակի երթուղիչ Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնին ու «Թումո կենտրոնին» (EPG Labs) օպտիկական կապուղիներով կապ ապահովելու համար: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 1*3.000.000 դրամ = 3.000.000 դրամ:

Ընդամենը ծախսերը կկազմեն՝ 9.500.000 դրամ

Ընդամենը՝ 245.140.000 դրամ:

## 2. CBANET ցանցի կոմունիկացիոն սարքավորումներ՝ 32,500.0հազ դրամ

2012 թվականին CBANet ցանցի հետ կապված կապիտալ ներդրումները ունեն 2 ուղղություն՝ նոր կառուցվող երկրորդ կենտրոնական հանգույցին (Ethernet) ոչ բանկ ֆինանսական կազմակերպությունների միացումը ու ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնի միացումը CBANet ցանցին:

CBANet ցանցի նոր հատվածի (Ethernet), որը կազմված է Etherhet կենտրոնական հանգույցից ու Ethernet քաղաքային հանգույցներից և հիմնված է GNC Alfa ընկերության MPLS ցանցային երթակառուցվածքի վրա, զարգացման հետ կապված կապիտալ ներդրումները հետևյալն են՝

- ձեռք բերել 2 հատ Juniper EX4200-24FP օպտիկական երթուղիչը, որոնց միջոցով խոշոր կազմակերպությունները, որոնք միանում են օպտիկական կապուղիներով, կմիանան Ethernet կենտրոնական հանգույցին: Պահանջվող ծախսերը կկազմեն՝

2*11.700.000 դրամ = 23.400.000 դրամ: Գները հիմնված են 2010 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:

- ձեռք բերել 2 հատ Juniper EX2200-24TP կոմուտատոր, որոնց միջոցով ոչ մեծ կազմակերպությունները, որոնք միանում են օպտիկական կապուղիներով, կմիանան Ethernet կենտրոնական հանգույցին: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 2*1.300.000 դրամ = 2.600.000 դրամ: Գները հիմնված են 2010 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:

- ձեռք բերել 3000VA UPS անխափան սնուցման սարք: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 800.000 դրամ: Գները հիմնված են Ինտերնետի տվյալների վրա:

- ձեռք բերել ինտերֆեյսի ձևափոխիչ 2 հատ Optical-RJ45 24port: Պահանջվող ծախսերը կկազմեն՝700.000 դրամ:

Այս նախագծի ընդհանուր արժեքը կկազմի 27.500.000 դրամ:

ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը CBANet ցանցին միացնելու համար նախատեսվում է կատարել հետևյալ կապիտալ ներդրումները՝

- ձեռք բերել 1 հատ երթուղիչ Cisco երթուղիչ Դիլիջանի Ethernet հանգույցին ու CDN հանգույցին միանալու համար: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 1*2.000.000 դրամ = 2.000.000 դրամ: Նշված կապի անվտանգությունը ապահովելու համար կպահաջվի նաև պաշտպանիչ հրապատ սարքավորում Cisco ASA 5500 տեսակի, որի արժեքը կկազմի մոտ 3.000.000 դրամ: Գները հիմնված են 2009 թվականի նման սարքեր ձեռք բերման մրցույթի արդյունքների վրա:

Ընդամենը ծախսերը կկազմեն՝ 5.000.000 դրամ

Ընդամենը՝ 32.500.000 դրամ:

### 3. Internet ցանցի կոմունիկացիոն սարքավորումներ՝ 39,600 հազ. ՀՀ դրամ

2012 թվականին CBANet ցանցի հետ կապված կապիտալ ներդրումներն ունեն 3 ուղղություն՝ ԿԲ-ի հիմնական մասնաշենքի լոկալ ցանցի ու ինտերնետ ցանցի համակցման կոմունիկացիոն սարքավորումների հզորեցում ու նրանց ֆունկցիոնալ հնարավորությունների ավելացում կապված անվտանգության ապահովման հետ, ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնում լոկալ համակարգչային ցանցի միացում ինտերնետ ցանցին ու այդ կապի անվտանգության ապահովում, Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» լոկալ ցանցի միացում ինտերնետ ցանցին ու այդ կապի անվտանգության ապահովում:

ՀՀ կենտրոնական բանկի ինտերնետից օգտվելու պահանջարկը գնալով աճում է ու ինտերնետի հետ փոխանակվող տեղեկատվական հոսքերը էապես աճում են: Մյուս կողմից ավելանում են ինտերնետից սպառնացող վտանգները, որոնք կարող են բերել ինչպես տեղեկատվության անցանկալի արտահոսքի ու կորստի, այնպես էլ

տեղեկատվական համակարգերի ֆունկցիոնալության կորստի կամ շահագործման բնութագրերի էական վատթարացման: Նման վտանգներին դիմակայելու ու ինտերնետի հետ տեղեկատվության փոխանակման պահանջվող թողունակության ապահովման համար նախատեսվում է ձեռք բերել.

**4.** MAIL ծառայությունների պաշտպանության ապարատածրագրային 2 համակարգեր (հիմնական ու պահուստային), օրինակ՝ Iron Port Dual EMail-Security Appliance: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 2* 3.500.000 դրամ = 7.000.000 դրամ

**5.** Նոր հզոր պաշտպանական ապարատա-ծրագրային հրապատ սարքավորում (Firewall), որը միևնույն ժամանակ օժտված է նաև կապի հոսքերի կառավարման ու վերահսկման, ինչպես նաև քաղաքականությունների կիրառման ֆունկցիաներով, օրինակ Palo Alto Networks PA-2020, 2 հատ (հիմնական ու պահուստային): Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 2* 11.300.000 դրամ = 22.600.000 դրամ: Գները հիմնված են Ինտերնետի տվյալների վրա:

Ընդամենը ծախսերը կկազմեն՝ 29.600.000 դրամ

ՀՀ կենտրոնական բանկի Դիլիջանի ուսումնահետազոտական կենտրոնը ինտերնետ ցանցին միացնելու համար նախատեսվում է կատարել հետևյալ կապիտալ ներդրումները՝

**6.** ձեռք բերել 1 հատ երթուղիչ Cisco երթուղիչ Դիլիջանի ինտերնետ ցանցին միանալու համար: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 1*2.000.000 դրամ = 2.000.000 դրամ: Նշված կապի անվտանգությունը ապահովելու համար կպահաջվի նաև պաշտպանիչ հրապատ սարքավորում Cisco ASA 5500 տեսակի, որի արժեքը կկազմի մոտ 3.000.000 դրամ: Գները հիմնված են 2009 թվականի նման սարքերի ձեռքբերման մրցույթի արդյունքների վրա:

Ընդամենը ծախսերը կկազմեն՝ 5.000.000 դրամ

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնը» ինտերնետ ցանցին միացնելու համար նախատեսվում է կատարել հետևյալ կապիտալ ներդրումները՝

**7.** ձեռք բերել 1 հատ երթուղիչ Cisco երթուղիչ Դիլիջանի ինտերնետ ցանցին միանալու համար: Պահանջվող ծախսերը կկազմեն՝ 1*2.000.000 դրամ = 2.000.000 դրամ: Նշված կապի անվտանգությունը ապահովելու համար կպահաջվի նաև պաշտպանիչ հրապատ սարքավորում Cisco ASA 5500 տեսակի, որի արժեքը կկազմի մոտ 3.000.000 դրամ: Գները հիմնված են 2009 թվականի նման սարքեր ձեռք բերման մրցույթի արդյունքների վրա:

Ընդամենը ծախսերը կկազմեն՝ 5.000.000 դրամ

Ընդամենը՝ 39.600.000 դրամ:

**4. Տեղեկատվական անվտանգության ծրագրաապարատային միջոցներ՝21,710.0 հազ ՀՀ դրամ:**

2012 թ նախատեսվում է Հակավիրուսային համակարգի ձեռք բերում, որի գումարը հաշվարկվում է 900 կայանի համար, միջին մեկ կայանի համար նախատեսելով 6000 ՀՀ Դրամ:

- 900 կայան * 6000 ՀՀ Դրամ = 5,400,000 ՀՀ Դրամ:

2012 թ. ՏԱ Ծառայությունը պլանավորվում է ինտեգրել ԿԲ մուտքի-ելքի համակարգը ցանցի և կիրառական համակարգերի մուտքի հետ: Դա հնարավորություն կտա օգտագործողներին մուտք գործել ցանց և կիրառական համակարգեր օգտագործելով իրենց մուտքի քարտերը: Առաջարկվում է ներդրումը կատարել փուլային եղանակով, 2012 թ. նշված հնարավորությամբ ապահովելով 200 կայան: Մեկ կայանի վրա ընկնող ծախսը միջին հաշվարկով կկազմի 150 ԱՄՆ դոլար (56550 ՀՀ Դրամ)

200 կայան * 56550 ՀՀ Դրամ = 11,310,000 ՀՀ Դրամ

Ինտերնետի օգտագործման քաղաքականության պահանջները արդյունավետ վերահսկելու նպատակով անհրաժեշտ է ներդնել ինտերնետի օգտագործման մոնիթորինգի համակարգ: Համակարգը թույլ կտա ձևավորել տարատեսակ հաշվետվություններ՝ ըստ կայքերի, ըստ օգտագործողների, ըստ ծավալի և այլն:

Նմանատիպ համակարգերի միջին արժեքը կազմում է 5,000,000 ՀՀ դրամ:

- **Համակարգչային ծրագրերի գծով կապիտալ ներդրումները պլանավորվել են՝ 926,507.0 հազ ՀՀ դրամ, որից**
    - **ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովման ձեռքբերման համար 127,160.0հազ ՀՀ դրամ,**
    - **Կիրառական ծրագրային ապահովման համար՝ 799,347.0 հազ ՀՀ դրամ:**

Ընդհանուր օգտագործման ծրագրային ապահովման դասին են պատկանում օպերացիոն համակարգերը, տեքստային խմբագիրները, գրաֆիկական համակարգերը, տվյալների բազաների կառավարման համակարգերը, ալգորիթմական լեզուների թարգմանները, սարքերի դրայվերները, հակավիրուսային ծրագրերը և այլն: Յուրաքանչյուր տարի ծրագիր մշակող ֆիրմաները լույս են ընծայում իրենց արտադրանքի նոր տարբերակներ՝ հարմարեցնելով նոր պահանջներին կամ ուղղելով նախկին տարբերակի սխալները:

Ծրագրավորման միջոցների և այլ ծրագրային փաթեթների թարմացումը կամ ձեռքբերումը թելադրվում է աճող պահանջներով և այլ կազմակերպությունների հետ տեղեկատվության փոխանակման անհրաժեշտությամբ: Մասնավորապես, եթե ստացվում է տեղեկատվություն, որ ստեղծվել է որևէ ծրագրի նոր տարբերակ, ապա նրա հին տարբերակը, շատ դեպքերում, ի վիճակի չէ այն մշակելու: Փոխկապակցված

ծրագրային փաթեթներից որևէ մեկի թարմացումը շատ դեպքերում պարտադրում է նաև մյուսների թարմացում: Ծրագրային համակարգերի մշակման փաթեթները թույլ կտան բարձրացնել ծրագրավորման արդյունավետությունը և որակը:

Այլ ծրագրային փաթեթների ձեռքբերումը կամ թարմացումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով՝

լոկալ համակարգչային ցանցի զարգացում;

ծրագրերի մշակման նոր տեխնոլոգիաների կիրառում;

տվյալների հենքի կառավարման համակարգի թարմացում և այդ համակարգի ադմինիստրավորման ծրագրային միջոցների ներդրում;

օգտագործվող ծրագրերի լիցենզիոն պայմանների պահպանում՝ ըստ միջազգային օրենքների:

2012թ. նախատեսվում են ձեռք բերել ծրագրային փաթեթներ հետևյալ նպատակներով՝

- ԿԲ-ի ինտերնետային կայքի կոնտենտի կառավարման ու պահպանման համակարգեր
- տվյալների հենքի կառավարման համակարգի թարմացում, պահանջվող քանակի արտոնագրերի ապահովում և այդ համակարգի ադմինիստրավորման ծրագրային միջոցներ
- ծրագրատեխնիկական սպասարկման ուտիլիտներ
- ծրագրաապարատային ինֆրակառուցվածքի վիրտուալիզացիայի,կառավարման և մոնիտորինգի համակարգի ներդրում
- ծրագրավորման միջոցների և ստանդարտ ծրագրերի նոր տարբերակների ձեռքբերում,
- ցանցային ենթակառուցվածքի կառավարման և մոնիտորինգի համակարգ:

Ստորև բերված են ծրագրային փաթեթները՝

1. Microsoft ընկերության Shaire Point փաթեթը ինտերնետի կիրառությունների համար՝ երկու սերվեր
2* 3.500.000 դրամ = 7.000.000 դրամ
2. Microsoft ընկերության MS SQL փաթեթը ինտերնետի կիրառությունների համար՝ երկու սերվեր
2* 1.100.000 դրամ = 2.200.000 դրամ
3. Տվյալների հենքերի կառավարման համակարգի ադմինիստրավորման ծրագրային գործիքներ
4.000 USD*377 դրամ= 1.510.000 դրամ
4. Ծրագրավորման համար անհրաժեշտ կոմպոնենտներ 2.000.000 դրամ
5. Microsoft ընկերության BizTalk փաթեթը 2 պրոցեսոր 35.000.000 դրամ

6. Ցանցի կառավարման և մոնիտորինգի համակարգ 20.000.000 դրամ

7. VMWARE վիրտուալիզացիայի ծրագրային համակարգ 6 պրոցեսոր 6* 4000 USD* 377 դրամ = 9.050.000 դրամ

Ընդամենը՝ 76.760.000 դրամ:

Բացի այդ ԿԲ-ը 2010 թվականին սկսել է արտոնագրել իր մոտ կիրառվող ORACLE ընկերության ծրագրային արտադրանքը: Արտոնագրման ենթակա օգտագործողների արտոնագրերի (լիցենզիա) քանակը հավասար է 400-ի՝ ԿԲ-ում ORACLE տվյալների կառավարման համակարգի Entrprise Edition տարբերակից օգտվողների քանակն է: Օգտագործողների արտոնագրերի այդ քանակը թույլ է տալիս նաև օրինական օգտագործել 8 հատ սերվերային արտոնագիր: Այդ նպատակով ԿԲ-ի և ORACLE ընկերության միջև կնքվել է փոխըմբռնման համաձայնագիր: Այդ համաձայնագրի շրջանակներում 2010 և 2011 թվականին ԿԲ-ը ձեռք է բերել 260 հատ ORACLE Entrprise Edition User Named License: 2012 թվականներին նախատեսվում է ձեռք բերել ևս 140 արտոնագիր: Այդ նպատակով ԿԲ-ի և ORACLE ընկերության միջև կնքվել է փոխըմբռնման համաձայնագիր: 2012 թվականի ձեռքբերման հետ կապված ծախսերը կկազմեն 140* 360.000 դրամ = 50.400.000 դրամ: Գինը հիմնված է 2010 ու 2011 թվականների ձեռք բերման տվյալների վրա:

Ընդհանուր ծախսերը կկազմեն 127.160.000 դրամ:

2012 թվականին կենտրոնական բանկը նախատեսում է ձեռք բերել և ներդնել տվյալների շտեմարանների միավորման, դրանց հետ տարբեր գործողությունների կատարման և ձևափոխումների կատարման ծրագրային փաթեթ, մասնավորապես՝ SAP ընկերության Business Objects Data Integrator Professional (4 CPU) փաթեթը, որը կիրառվելու նոր FINA համակարգի ստեղծման ժամանակ, որպես նրա տվյալներ մշակող ենթահամակարգ: Հետագայում փաթեթը կարող է օգտագործվել նաև այլ համակարգերի տվյալների շտեմարանների հետ: Փաթեթի ձեռք բերման արժեքը կկազմի մոտավորապես 100.000.000 դրամ:

ՀՀ-ում կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի շրջանակներում ձեռք է բերվելու նաև «Կենսաթոշակային կուտակային հաշիվների կառավարման» ծրագրային համակարգ, որը օգտագործվելու է ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի կողմից: Համակարգի մշակման և ներդրման նախագիծն արդեն իրականացվում է, ներկայումս մշակվում են համակարգի որոշ մոդուլներ, որոնք աշնանից տեստավորվելու են: Համակարգի ներդրման ընդհանուր արժեքը՝ ըստ մատակարար կազմակերպության հետ պայմանագրի, կազմում է մոտ 603.177.000 դրամ:

Դիլիջանի «Գիտելիք հանուն զարգացման կենտրոնի» համար նախատեսվում է ձեռք բերել հետևյալ ծրագրային փաթեթները՝

- գրադարանային ծրագրային համակարգ՝ Հայաստանի Ամերիկյան համալսարանի համակարգ, արժեքը կկազմի 1.000.000 դրամ,
- ինտերնետի միջոցով տեսադասերի անցկացման համակարգ, արժեքը կկազմի 1.100.000 դրամ

Ընդհանուր 2.100.000 դրամ:

2012 թվականին ԿԲ-ում նախատեսվում է սկսել երկու խոշոր նախագծի իրականացում՝ Կանխիկի կառավարման միասնական ավտոմատացված համակարգի մշակումը ու Հիբրիդ վճարային համակարգի մշակումը, որոնց ներդրումը կկատարվի համապատասխանաբար 2013 ու 2014 թվականներին: Այս համակարգերը մշակվելու են կենտրոնական բանկի կողմից՝ օգտագործելով սեփական աշխատակիցների ռեսուրսը և ծառայությունների մատուցման սկզբունքով ներգրավված մասնագետներին կամ մասնագիտացված կազմակերպություններին: Այս համակարգերը պետք է դառնան ոչ նյութական ակտիվներ ու այդ պատճառով դրանց մշակման հետ կապված ծախսերը պետք կապիտալիզացվեն:

Կանխիկի կառավարման միասնական ավտոմատացված համակարգի մշակման նախագծով 2012 թվականին նախատեսվում մշակել օգտագործողների պահանջները, տեխնիկական առաջադրանքը, ընտրել համակարգի ճարտարապետությունը ու մշակել ծրագրային ապահովման առանձին մոդուլներ: Այդ նպատակով անհրաժեշտ է ներգրավել 1 նախագծի ղեկավար՝ 12 ամիս, 2 տեխնոլոգ՝ 12 ամիս, 3 ծրագրավորող՝ 12 ամիս և 1 տեստավորող՝ 6 ամիս: Պահաջվող ծախսերը կկազմեն՝ 1 մարդ *12 ամիս* 600.000 դրամ (ներառյալ սոցապ վճարներ) = 7.200.000 դրամ, 2 մարդ * 12 ամիս * 250.000դրամ (ներառյալ սոցապ վճարներ) = 6.000.000 դրամ, 3 մարդ * 12 ամիս * 350.000դրամ (ներառյալ սոցապ վճարներ) = 12.600.000 դրամ,1 մարդ * 6ամիս * 200.000դրամ (ներառյալ սոցապ վճարներ) = 1.200.000 դրամ: Այն դեպքում, երբ աշխատանքները կատարվեն կազմակերպության կողմից՝ ընդհանուր ծախսերը կավելանան մոտ 30%-ով, ինչը կկազմի 10.800.000 դրամ: Ընդհանուր ծախսը կկազմի 37.800.000 դրամ: Կենտրոնական բանկի կողմից աշխատանքներին կմասնակցեն մոտ 11 աշխատակից՝ տարբեր ժամկետներով ու դրանց ընդհանուր տարեկան աշխատավարձը այդ ժամկետի համար կկազմի մոտ 15.500.000 դրամ: Ընդհանուր կապիտալ ներդրումը կկազմի 53.300.000 դրամ:

Հիբրիդ Վճարային համակարգի մշակման նախագծով 2012 թվականին նախատեսվում մշակել օգտագործողների պահանջները, տեխնիկական առաջադրանքը, ընտրել համակարգի ճարտարապետությունը, մշակել ծրագրային ապահովման որոշ մոդուլներ: Այդ նպատակով անհրաժեշտ է ներգրավել 2 տեխնոլոգ՝ 12 ամիս, 3 ծրագրավորող՝ 10 ամիս և 1 տեստավորող՝ 4 ամիս: Պահաջվող ծախսերը կկազմեն՝ 2 մարդ * 12 ամիս * 250.000դրամ (ներառյալ սոցապ վճարներ) = 6.000.000 դրամ, 3 մարդ * 10 ամիս * 350.000դրամ (ներառյալ սոցապ վճարներ) = 10.500.000 դրամ,1 մարդ * 4ամիս * 200.000դրամ (ներառյալ սոցապ վճարներ) = 800.000 դրամ: Այն դեպքում, երբ աշխատանքները կատարվեն կազմակերպության կողմից՝ ընդհանուր ծախսերը կավելանան մոտ 40%-ով, ինչը կկազմի 6.920.000 դրամ: Ընդհանուր ծախսը կկազմի

24.220.000 դրամ: Կենտրոնական բանկի կողմից աշխատանքներին կմասնակցեն մոտ 15 աշխատակից՝ տարբեր ժամկետներով ու դրանց ընդհանուր տարեկան աշխատավարձը այդ ժամկետի համար կկազմի մոտ 16.500.000 դրամ: Ընդհանուր կապիտալ ներդրումը կկազմի 40.770.000 դրամ:

Ընդհանուր ծախսերը կկազմեն 799.347.000 դրամ:

### *Գրասենյակային գույք, կապի միջոցներ , այլ հիմնական միջոցներ՝ 53,095.0 հազ. ՀՀ դրամ*

Կենտրոնական բանկի բնականոն գործունեությունը ապահովելու նպատակով անհրաժեշտ այլ հիմնական միջոցներ, մասնավորապես՝ կապի միջոցներ, պատճենահանող սարքեր, թուղթ ոչնչացնող սարքեր, տնտեսական գործիքներ և այլ հիմնական միջոցներ ձեռք բերելու համար 2012 թվականին նախատեսված է 53,095.0 հազ. ՀՀ դրամ

### *Անվտանգության ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ՝ 48,548.3 հազ.ՀՀ դրամ*

2012 թ. անվտանգության ոլորտի կապիտալ ներդրումների ծախսերը հիմնականում պայմանավորված են կենտրոնական բանկի, պահուստային բանկի և տարածքային դրամարկղային կենտրոնների անվտանգության համակարգերի ընդարձակման, ինչպես նաև ԿԲ նոր մասնաշենքում անվտանգության սարքավորումներ տեղադրման հետ:
Համակարգերի և սարքերի քանակները պլանավորվել է՝ հաշվի առնելով արդեն գործող ԿԲ անվտանգության ինտեգրացված համակարգի պահանջները, իսկ գները՝ ԿԲ-ին անվտանգության սարքավորումներ մատակարարող կազմակերպության հետ կնքված պայմանագրային գները և ներկայիս շուկայական գները/ինտերնետային կայքերի միջինացված գները/, գումարած ներմուծման ճանապարհային ծախսերը և հարկերը:

### *Էմիսիոն և կանխիկ դրամով գործառնությունների ապահովման համար անհրաժեշտ հիմնական միջոցներ՝ 20,615.5 հազ. ՀՀ դրամ, որից՝*

**Թղթադրամների կապոցների վակուումային կնքիչ** 1 հատ 2.500.000 դրամ արժողությամբ՝ նոր բացվող ՏԴԿ-ին հատկացնելու համար :

**Թղթադրամներ հաշվող մեքենա-** 3 հատ (մեկ միավորի արժեքը՝ 400.000 դրամ) ընդամենը 1.200.000 դրամ արժողությամբ՝ նոր բացվող ՏԴԿ-ին հատկացնելու համար:

**Մետաղադրամներ հաշվող մեքենա** 1հատ 400.000 դրամ արժողությամբ՝ նոր բացվող ՏԴԿ-ին հատկացնելու համար :

**Գանձապահի վերահաշվարկի փակ սեղան** 2 հատ  (մեկ միավորի արժեքը՝ 200.000 դրամ): Ընդամենը պլանավորվում է 400.000 դրամ՝ նոր բացվող ՏԴԿ-ին հատկացնելու համար :

**Մետաղադրամներ փաթեթավորող մեքենա** Դրամանիշների վերահաշվարկի և տեսակավորման բաժնին հատկացնելու համար 1 հատ 15.183.000 դրամ արժողությամբ՝ հիմք ընդունելով 2009թ. պայմանագրով ձեռք բերված նմանատիպ մեքենայի գինը:

**Սայլակ 2 հատ** (մեկ միավորի արժեքը 150.000 դրամ): Ընդամենը պլանավորվում է 300.000 դրամ՝ նոր բացվող ՏԴԿ-ին հատկացնելու համար:

**Դրամանիշների փորձագիտական համալիր ՝** 632.5 հազ.ՀՀ դրամ

Ներկայումս թղթադրամների փորձաքննությունը իրականացվում է Vildis ultramag 225 CL սարքով, որը ձեռք է բերվել ՀՀ ԿԲ կողմից 11 տարի առաջ, որը հնացել է:

2012թ նախատեսվում է ձեռք բերել թվով 2 հատ «Ուլտրամագ C6» վիդեո սարք, որը բազմաֆունկցիոնալ է՝ հագեցված խոշորացույցով, մոնիտորով, ունի թղթադրամի մագնիսական և ուլտրակարմիր հատկանիշները ստուգելու հնարավորություն, միացվում է համակարգչին, ինչը չի ապահովում հին սարքը:

## *3. Կապիտալ ներդրում այլ իրավաբանական անձանց կանոնադիր կապիտալում՝ 7,400,000.0 հազ. ՀՀ դրամ*

«Հայինկասացիա» ՓԲԸ կանոնադրական կապիտալում պլանավորվում է կատարել **1,400 մլն** ՀՀ դրամի կապիտալ ներդրում, որը ուղղվելու է «Հայինկասացիա» ՓԲԸ-ի տեխնիկական վերազինմանը:

«Ազգային հիփոթեքային ընկերություն» և «Բնակարան երիտասարդներին» ՈՒՎԿ կապիտալում պլանավորվում է կատարել **6 մլրդ** դրամի կապիտալ ներդրում: Համալրումները պայմանավորված են վերջիններիս զարգացման հնարավորությունների ավելացման անհրաժեշտությամբ:

## *4. Վարչական նպատակներով իրականացվող կապիտալ ներդրումներ՝ 71,000.0 հազ. ՀՀ դրամ:*

Դիլիջանում կառուցվող «Ուսումնահետազոտական կենտրոն» և «Գիտելիք հանուն զարգացման» համալիրների և բնակելի հատվածի միջև ԿԲ աշխատակիցների փոխադրումները կազմակերպելու համար նախատեսվում է ձեռք բերել 1 հատ HYUNDAI մակնիշի ավտոբուս և 2 հատ Volkswagen The crafter մակնիշի միկրոավտոբուսներ:

***Ընդամենը կապիտալ ներդրումների և հիմնական միջոցների ձեռքբերման ծրագիր՝ 35,200,904.8 ՀՀ դրամ***